Azg
armenian daily

21 ՄԱՐՏ 2000 ԵՐԵՔՇԱԲԹԻ 51 (2019)

Ռումբ՝ Բուենոս Այրեսի «Ս. Գր. Լուսավորիչ» դպրոցի մուտքին

Ուրբաթ օրը, մարտի 17-ին, լույս առավոտյան ժամը 1-ին միջին ուժգնության ռումբ է պայթել Բուենոս Այրեսի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» մանկապարտեզի մուտքին: Փշրվել են կրթօջախի ապակիները, խորտակվել է դարպասը: Մանկապարտեզը գտնվում է Արգենտինայի մայրաքաղաքի Քորոնել Նիսեսո Վեգա փողոցի վրա, ծիշ դիմացը ՌԱԿ-ի «Սարդարապատ» շաբաթաթերթի խմբագրության եւ հատում է «Արմենիա» պողոտան, որտեղ գտնվում են Հայոց առաջնորդանիստ եկեղեցին, ՀՅԴ-ի եւ ՌԱԿ-ի երիտասարդական կենտրոնները: Դեռեւս ոչ ոք չի ստանձնել պայթեցման պատասխանատվությունը: Սակայն տեղի հայկական շրջանակներում կասկածներ կան 2 ուղղությամբ: Առաջին՝ «Ս. Գր. Լուսավորիչ» մանկապարտեզի դիմաց գտնվող բեռնատարների արհմիության դեմ՝ մրցակից մեկ այլ արհմիության կողմից, եւ կամ երկրորդ՝ ՀՅԴաբնակցության տեղական պառակտված հատվածների միջեւ գոյություն ունեցող հակամարտության արդյունք:

Արգենտինայի ներքին գործերի նախարար Ֆեդերիկո Ստորանու կարգադրությամբ, արդեն 3-րդ օրն է հայկական տարբեր հաստատությունների մուտքերում ոստիկանական պահակներ են հսկում: .

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի՞նչ է նշանակում նախագահի կարգադրությունը

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Ազգի» մարտի 18-ի համարում մեր ընթերցողներին տեղեկացրել էինք, որ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ստորագրել է մի կարգադրություն, որով վարչապետ Արամ Սարգսյանին առաջարկել է վերանայել ՀՀ վարչապետի 1999 թ. օգոստոսի 18-ի թիվ 494 որոշումը, մասնանշելով, թե դրա 2-րդ կետի «բ» ենթակետը «չի բխում» Սահմանադրության 5, 49, 55 եւ 85 հոդվածների, ինչպես նաեւ «ՀՀ կառավարության կառուցվածքը եւ գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ նախագահի 1995 թ. հուլիսի 25-ի հրամանագրի 73 կետի պահանջներից:

Այս կարգադրությունը մեզ համար նույնպես հանելուկ էր, եւ խոստացել էինք բացել փակագծերը:

Ի՞նչ –կարողացանք պարզել ու հասկանալ:

1999 թ. օգոստոսի 18-ի թիվ 494 որոշումով, որ կայացրել է դեռեւս եղերահիշատակ վարչապետ Վազգեն Սարգսյանը, հաստատված է այն պաշտոնյաների ցանկը, որոնց պաշտոնի նշանակումն ու ազատումը պետք է համաձայնեցվեր վարչապետի հետ: Նկատի են առնվում ՀՀ նախարարությունների եւ գերատեսչությունների, կենտրոնական ադարաների կառուցվածքային ստորաբաժանումների, պետական փակ բաժնետիրական ընկերությունների ղեկավարները, առանձին հիմնարկների տնօրենները:

Նոր կարգադրությամբ ՀՀ նախագահը վարչապետին մատնանշում է, թե տվյալ ցանկում նախատեսված՝ ՀՀ ազգային անվտանգության, ներքին գործերի եւ պաշտպանության նախարարությունների կենտրոնական հիմնարկների ղեկավարների նշանակումները դուրս են վարչապետի իրավասություններից: Ո՞ր պաշտոններն են նկատի առնվում:

ա) ՀՀ ԱԱ նախարարության 1-ին, 2-րդ, 3-րդ գլխավոր վարչությունների պետերը, 4-րդ վարչության պետը, պետական սահմանի պահպանության գլխավոր վարչության պետը, Երեւանի քաղաքային, մարզային վարչությունների պետերը:

Տես էջ 2

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Խորհրդարանական պայթուցիկ եռօրյա

Օրակարգում էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումն է եւ էներգետիկ ոլորտում յուրացումները

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Դավիթ Լոիյանի ղեկավարությամբ գործող 92-99 թթ. էներգակիրների ներկրման, արտադրված էլեկտրաէներգիայի օգտագործման, ինչպես նաեւ էներգետիկ համակարգին ուղղված վարկերի արդյունավետությունն ուսումնասիրող հանձնաժողովն այս եռօրյայում պետք է ներկայացնի իր աշխատանքի արդյունքները: Հանձնաժողովի հաղորդումը կարող է ռումբի պայթյունի ազդեցություն գործել՝ հատկապես, եթե մեր պետությունն իրոք պարզել է կոռուպցիայի դեմ պայքարի դրոշը: Սակայն հանձնաժողովի հաղորդման համար Աժ որոշման նախագծով նախատեսված է ընդամենը 10 րոպե, բացառվել են հանձնաժողովի նախագահ Դավիթ Լոիյանին ուղղված պատգամավորական հարցերն ու ելույթները: Այդ նախագծի երրորդ կետում նշված է, որ հաղորդումն ընդունվում է ի գիտություն՝ առանց որեւէ որոշում ընդունելու: **«Ազգը»** դիմեց Դավիթ Լոիյանին եւ հանձնաժողովի «Միասնության» ներկայացուցչին, որոնք միաժամանակ հավաստեցին, թե իրենք պնդելու են նախագծի վերանայումը՝ պահանջելով Աժ կանոնակարգի բարեփոխումից հետո, որը տեղի կունենա այսօր, իրենց հաստատել 25-30 րոպե, ինչպես նաեւ արտոնել պատգամավորներին ըստ էության հարցեր ուղղել հանձնաժողովին, որպեսզի որեւէ թյուրըմբռնում չստեղծվի



ՀԱՄԱՌՈՏ

Լիբանանի նախագահն ընդունեց Հայաստան այցելելու հրավերը

ԵՐԵՎԱՆ, 20 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Մարտի 20-ին Լիբանանի նախագահ Էմիլ Լահուդն ընդունել է Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպան Արման Նավասարդյանին: Դեսպանը նախագահին է փոխանցել Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական հրավերը՝ Հայաստան այցելելու վերաբերյալ (այցի ժամկետները դեռեւս ճշգրտված չեն): ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչության հաղորդագրության համաձայն, Էմիլ Լահուդն ընդգծել է, որ այցը նոր լիցք կհաղորդի երկու երկրների բարեկամական հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանը:

Երեւան են ժամանում ԱՄՆ բարձրաստիճան զինվորականներ

ԵՐԵՎԱՆ, 20 ՄԱՐՏ, ՍՆՍՐՔ: Այսօր սպասվում է Եվրոպայում ԱՄՆ զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալ ադմիրալ Չարլզ Էբոտի եւ նրա գլխավորած պատվիրակության ժամանումը Երեւան: Այդ մասին հաղորդեցին Հայաստանում ԱՄՆ դեսպանատանը: ԱՄՆ զինվորականները Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի հետ կքննարկեն պաշտպանության ու անվտանգությանն առնչվող հարցեր: Մարտի 21-ի երկրորդ կեսին ԱՄՆ պատվիրակությունը կմեկնի Երեւանից:

Պաշտպանների բողոքը մերժվեց

ԵՐԵՎԱՆ, 20 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մարտի 20-ին դռնփակ նիստերի արդյունքում մերժել է հոկտեմբերի 27-ի գործով մեղադրյալներ Մուշեղ Մովսիսյանի եւ Հարություն Հարությունյանի պաշտպաններ Կրոմվել Գրիգորյանի եւ Ռուբեն Ոսուսնու վերաքննիչ բողոքները՝ իրենց պաշտպանյալների կալանքը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ: Այս մասին հայտնեց Քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահ Ռազմիկ Ազարյանը:

ԹԵԺ ԿԵՏԵՐ

Չեչենները պետք է անկախության հասնեն այլ ճանապարհներով

ՄՈՍԿՎԱ, 18 ՄԱՐՏ, ՍՆՍՐՔ: «Մենք 400 տարի ռազմական ճանապարհով ձգտել ենք անկախության, սակայն ոչնչի չենք հասել: Այժմ ես իմ ժողովրդին կոչ եմ անում փորձել գոնե 100 տարի անկախություն ձեռք բերելու այլ ճանապարհներ», լրագրողներին հայտարարել է Չեչնիայի մուֆթի Ահմադ-Հաջի Արդուլ Կադիրովը: Մուֆթիի խոսքերով, չարժի պատրանքներ տածել հանրապետությունում ռազմական կոմպանիայի նկատմամբ: Նրա կարծիքով, պատերազմը կավարտվի այն ժամանակ, երբ անջատականների շարքերում մարտնչող յուրաքանչյուր չեչեն «կգիտակցի այդ պատերազմի անհեռանկարայնությունը»: Մուֆթին հատկապես ընդգծել է, որ չեչենները պետք է «ողջ աշխարհին ցույց տան», որ իրենք խաղաղ մարդիկ են եւ երբեք «բոլոր կովկասյան ժողովուրդներին չեն պարտադրի նրանց համար օտար մի գաղափարախոսություն, որն ամեն տեսակի եկվորներ են իրենց հետ բերել»:

Լիմասոլում բախումներ հույների եւ թուրքերի միջեւ

ՆԻԿՈՍԻԱ, 20 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ինչպես հաղորդում է «Ֆրանսպրես» գործակալությունը, մարտի 15-ին Կիպրոսի հունական՝ հարավային մասում գտնվող, Լիմասոլ քաղաքում բախումներ են տեղի ունեցել թուրքերի եւ հույների միջեւ: Գործակալությունը, վկայակոչելով կիպրական մասնավոր «Անտենա» հեռուստաընկերությանը, հաղորդում է բախումների մասին, որոնց մասնակցել է ավելի քան 50 մարդ, որոնք մեկը մյուսի վրա քարեր են նետել, աղյուսներ, մետաղյա ձողեր: Շորս հոգի թեթեւ վիրավորվել է եւ տեղափոխվել հիվանդանոց, վեցին՝ կալանավորել է ոստիկանությունը:

«ՎԱՆՈ+11» ԴԱՏ

Պաշտպան Վանյա Սուքիասյանը շարունակեց իր հարցերը՝ ուղղված Վահան Հարությունյանին

ԵՐԵՎԱՆ, 20 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ՀՀՇ վարչության նախագահ, Աժ պատգամավոր Վանո Սիրադեղյանի եւ մյուսների գործով մարտի 20-ի դատական նիստում գլխավոր ամբաստանյալի պաշտպան Վանյա Սուքիասյանը շարունակեց՝ հարցեր ուղղել ՀՀ ներքին գործերի նախկին հրամանատար, ամբաստանյալ Վահան Հարությունյանին:

Պատասխանելով հարցերին, ամբաստանյալը վերադարձնում էր իր նախաքննական եւ դատաքննական ցուցմունքները, պաշտպանի հարցերի մի մասն էլ նոթատետրում մերժել էր նոթատետր ունեցած սանալ՝ Վահան Հարությունյանի գնահատականները Հայաստանի ներքաղաքական իրավիճակին առնչվող այս կամ խնդրի վերաբերյալ: Մասնավորապես, պաշտպանի հերթական հարցին ի պատասխան Վ. Հարությունյանը պարզաբանեց, որ «1998 թ. դեռեւ» ասելով ինքը նկատի է ունեցել ՀՀ ներքին գործերի հրամանատար Արծրուն Մարգարյանի ոստիկանությունը: Դատարանում հրապարակվեցին այս կապակցությամբ Վահան Հարությունյանին հասած լուրերը, ըստ որոնց այն ժամանակ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը Ազգային ժողովում հանդիմանել է Վանո Սիրադեղյանին եւ հարցրել, թե ինչո՞ւ կրակեցին Ա. Մարգարյանի ոստիկանին եւ ահաբեկչական ակտ կազմակերպվեց Ավանի նախկին քաղաքապետ Ռուբեն Հայրապետյանի դեմ: Հիվանդանոցում, որտեղ բուժվում էր Արծրուն Մարգարյանը, Վ. Հարությունյանին հարցնում էին, թե ո՞ւմ միջոցով կարող էր Վանո Սիրադեղյանը կրակել Արծրուն Մարգարյանի վրա: Եւ այն ժամանակ, եւ այժմ Վահան Հարությունյանն այն կարծիքին է, որ Վանո Սիրադեղյանն ընդհանրապես կապ չունի Արծրուն Մարգարյանի ոստիկանին արձակված կրակոցների հետ:

Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի դատավոր, գործող նախագահող Ռազմիկ Թովմասյանը որեւէ կերպ չէր միջամտում հարցերին, որոնք կամ կրկնություններ էին տալիս, կամ էլ չէին առնչվում գործին: Ի վերջո, այս կապակցությամբ իր դժգոհությունը հայտնեց մեղադրող Գագիկ Ավետիսյանը, նշելով, որ ամբաստանյալը վերարտադրում է իր նախաքննական եւ դատաքննական ցուցմունքները: Ըստ մեղադրողի, նման վերարտադրության կարիք կարող էր առաջանալ, եթե ցուցմունքները հակասեին միմյանց, իսկ ամբաստանյալի ցուցմունքներում հակասություններ չկան:

ՔՆՔԱՑԻԿ

Ինչ ներելի է մեծ եղբորը, ներելի չէ փոքրին

«Միասնությունը», ՀՅԴ-ն, «Օրինաց երկիրը» մեկնաբանում են նախագահի վերջին քայլերը

***Նախագահ Ռոբերտ Քոչարյանը սասանված նախագահական իշխանությունը բերում է ելման վիճակի դարձ ի շրջանս նախագահական հանրապետության: «Ազգը» դիմեց ԱԺ-ում խմբակցություն ունեցող կուսակցություններին մեկնաբանելու Ռոբերտ Քոչարյանի վերջին նախաձեռնությունները, որոնց տրամաբանությունը միանշանակ է իր ձեռքում կենտրոնացնել ամբողջ գործադիր իշխանությունը՝ սկսելով ամենակարեւորից՝ կադրային նշանակումներ ուժային կառույցներում: Պաշտպանության ոլորտում հրապարակելով բարձրագույն հրամանատարական կազմի ցուցակը, նախագահն այժմ կասեցնում է վարչապետ Վազգեն Սարգսյանի օրոք ընդունված կառավարության 494 որոշման երկրորդ կետի Բ ենթակետը՝ ուժային նախարարություններում ԱԱ, ՆԳ եւ ՊՆ, կադրային նշանակումների դեկը վերցնելով իր ձեռքը: Այսուհետ նախագահն ինքը պետք է նշանակի այս ոլորտի ոչ միայն փոխնախարարներին, այլեւ վարչության պետերին: Դիտորդների կարծիքով՝ այս տրամաբանությամբ եթե մինչեւ վերջերս նախագահին էին գուժում անգլիական թագուհու կարգավիճակ, ապա այսօր վարչապետն է զրկվում որոշ լիազորություններից, սակայն նրա ուսերին դրվում է ազդեցիկ պատասխանատվության բեռ: «Ուժն է ծնում իրավունքը» նժդեհյան կարգախոսը հայոց քաղաքական այրերը լավ են յուրացրել, ով տնօրինում է ուժային նախարարությունների, ինչպես նաեւ հանրապետական դատախազության կադրային բանկը, նա էլ թելադրում է խաղի կանոնները:*

«Միասնությունը» պատրաստում է օրենսդրական նախաձեռնություն

Անդրանիկ Մարգարյան՝ «Միասնություն» ԱԺ խմբակցության ղեկավար. «Ուժային նախարարություններն այն ոլորտն են, որ պայմանավորված են վարչապետ-նախագահ հարաբերություններով: Նախագահն առաջին հրամանագիրը ստորագրեց բարձրագույն հրամանատարական կազմի ցուցակի վերաբերյալ, որից հետո սպասելի էր այս քայլը: Սա մի բաց տեղ է, որն անհրաժեշտ է արագ լրացնել, որպեսզի ամեն ինչ չթողնենք նախագահ-վարչապետ անձնական կողմնորոշումների դաշտում, չպետք է թույլ տալ կարեւորագույն հարցերը լուծել պահի կողմնորոշումներով, ամեն ինչ պետք է լինի օրենքով: Բերեմ Ռուսաստանի օրինակը, որտեղ ե՛ւ բանակում, ե՛ւ ուժային նախարարություններում նշանակումների մեխանիզմը կարգավորվում է առանձին օրենքով: Հավանական է մոտակա ժամանակում մենք օրենսդրական նախաձեռնություն կբերենք ԱԺ՝ այս ոլորտում Սահմանադրության սկզբունքները կանոնակարգող: Թող յուրաքանչյուր ոք զբաղվի իր խնդիրներով, եւ նրա քայլը սուբյեկտիվ չմեկնաբանվի: Չմոռանանք նաեւ, որ այս հրամանագրերը որեւէ արժեք չէին ունենա, եթե նախագահի եւ վարչապետի միջեւ նորմալ հարաբերություն եւ վստահություն լիներ: Պետք չէ խոսել նախագահի դիրքերի ուժեղացման եւ վարչապետի թուլացման մասին: Մենք հո բշնամական տարբեր բանակներում չենք, որ մտածենք, թե կառավարության դիրքերի թուլացումը հանուն մի անհատի կարող է փոխարինել պետական շահերը: Պետության շահերից էլ ելնելով է, որ «Միասնությունը» պետք է աշխատի մինչեւ այս հարցի լուծումը»: **«Ազգի»** վերջին հարցին, թե վարչապետն այս կերպ չի դառնո՞ւմ անգլիական թագուհի, Անդրանիկ Մարգարյանն արձագանքեց իբրեւ օրենսդիր. «Վարչապետը վարչապետ է: Մեր Սահմանադրությամբ վարչապետերը պարզապես վարչապետներ են՝ «ինչպես թագուհին ասաց»:

ՀՅԴ-ն ողջունում է կառավարությունում աշխատանքի բաժանումը՝ հօգուտ նախագահի

Արմեն Ռուսամյան՝ ՀՅԴ ԳՄ խաղաղական ներկայացուցիչ, ԱԺ պատգամավոր. «Նախագահի վերջին հրամանագրերը դրական են գնահատում, որովհետեւ նա իրեն վերապահեց սահմանադրությամբ նախագահին վերապահված իրավասությունները՝ դրանով էլ ճշտվեցին նախագահի ե՛ւ լիազորությունները ե՛ւ պարտավորությունները: Որքան լիազորություն, այդքան էլ պատասխանատվություն: Վարչապետի պաշտոնի լուծարման մասին խոսք չի գնում. մեր կարծիքով, կատարվեց կառավարության մեջ աշխատանքի բաժանում: Ուժային կառույցները պետք է ենթարկվեն նախագահին, որովհետեւ Սահմանադրության 49 հոդվածով նախագահը հանրապետության անվտանգության երաշխավորն է, եւ բնական է, որ նա պետք է տիրապետի ուժային նախարարությունների գործունեությանը՝ օգտագործելով ե՛ւ զինվորական ե՛ւ իրավապահ մարմինները: Հետեւաբար նախագահն իր տնօրինության տակ է վերցնում նաեւ կադրային քաղաքականությունն ուժային ոլորտներում: Ինչ վերաբերում է Վազգեն Սարգսյանին նախագահական որոշ լիազորություններ զիջելուն, ապա չմոռանանք, որ նա առանձնահատուկ դերակատարում ունեցող անձ էր մեր քաղաքական եւ պետական կյանքում, Վազգեն Սարգսյանն անձնական պատասխանատվություն էր ստանձնել, նա առաջնորդ էր, հոկտեմբերի 27-ից հետո իրադրությունը փոխվել է, Հայաստանում սկսվել էր անորոշության, երկիշխանության շրջան, եւ գործադիր իշխանության առանձին թեւերը սկսել էին մեկը մյուսի վրա գցել պատասխանատվությունը ղեկավարելու ե՛ւ բեռը, ե՛ւ իրավունքները: Վերջերս նախագահը սկսեց հնարավորինս հստակեցնել գործադիր իշխանության տարբեր թեւերի լիազորություններն ու պատասխանատվությունը, որը մենք ողջունում ենք»:

Անվստահություն գործադիր իշխանություններում

Արքուր Բաղդասարյան՝ «Օրինաց երկիր» կուսակցության եւ ԱԺ խմբակցության ղեկավար. «Այդ թիվ 494 որոշումը ծնվել է Վազգեն Սարգսյանի վարչապետության օրոք, եւ նախագահի կողմից ուժային նախարարություններին վերաբերող հաստվածով դրա կասեցումը վկայում է, որ գործադիր իշխանության թեւերի մեջ կա անվստահություն, եւ եթե Վազգեն Սարգսյանի հետ Ռոբերտ Քոչարյանը չուներ տարակարծություն, ապա Արամ Սարգսյանի պարագայում տեսնում ենք տարակարծության դրսեւորումները: Հակառակ դեպքում Վազգեն Սարգսյանի ժամանակ էլ նախագահը կփորձեր անդրադառնալ այդ որոշմանը: Մենք միանշանակ կողմ ենք փոխադարձ հանդուրժողականության: Եթե երկրում մեկ միասական թիմ է գործում, ապա նշանակություն չունի՝ ով է նշանակում ուժային նախարարությունների վարչությունների պետերին: Մենք չունենք օրենքների կատարման ենթաօրենսդրական ակտերի մասին օրենք, այստեղից էլ՝ Սահմանադրության մեկնաբանման փորձեր ե՛ւ նախագահի ե՛ւ վարչապետի կողմից»:

Արքուր Բաղդասարյանի ասածները հաստատելով՝ մատնանշենք Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերը, ըստ որի՝ կառավարությունն ապահովում է ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, սեփականության եւ հասարակական կարգի պահպանումը:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Ի՞նչ է նշանակում նախագահի կարգադրությունը

Սկիզբը էջ 1

բ) ՀՀ ներքին գործերի նախարարության գծով՝ ներքին զորքերի հրամանատարը, շտաբի պետը, կադրերի գլխավոր վարչության պետը, կազմակերպված հանցագործության դեմ պայքարի գլխավոր վարչության պետը, ինքնական գլխավոր վարչության պետը, քրեական հետախուզության գլխավոր վարչության պետը, քրեական պատիժների իրականացման վարչության պետը, 7-րդ վարչության պետը, պետավտոտեսչության վարչության պետը, երեւանի քաղաքային, մարզային ներքին գործերի վարչությունների պետերը:

գ) ՀՀ պաշտպանության նախարարության գծով՝ գլխավոր շտաբի պետի տեղակալները, կադրերի գլխավոր վարչության պետը:

Ավելի ուղղակի ասած, նախագահն այս կարգադրությամբ կասեցրել է զոհված վարչապետի 1999 թ. օգոստոսի 18-ի թիվ 494 որոշման գործադրումը վերոհիշյալ նշանակումների մասով: Դժվար է հավատալ, թե նախագահ Ռոբերտ Քոչարյանին ամբողջ 8 ամիս պետք եղավ, որպեսզի պարզի, թե վարչապետի հիշյալ որոշումը նրա սահմանադրական լիազորությունների վերազանցում է: Հազիվ թե Վազգեն Սարգսյանն իր այս որոշումը նախապես համաձայնեցրած չլիներ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Սակայն, ինչպես երեւում է, այն, ինչ նախագահը պատրաստ էր վստահելու նախորդ վարչապետին, չի ուզում թողնել ներկա վարչապետի հայեցողությանը:

Իսկ ի՞նչ է նախատեսում Սահմանադրությունը եւ մասնավորապես՝ նրա այն հոդվածները, որոնք իր կարգադրության մեջ հիշատակում է նախագահը:

Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը ընդգծում է՝ «պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ»: Սա թափանցիկ մի ակնարկ է, որ վարչապետի 1999 թ. օգոստոսի 18-ի խնդրո առարկա որոշումով պաշտոնատար անձը, տվյալ դեպքում՝ վարչապետը, իրեն վերապահել է այնպիսի իրավասություններ, «որոնց համար լիազորված չէ օրենսդրությամբ»:

Սահմանադրության 49-րդ հոդվածը վկայակոչված է զուտ նրա համար, որպեսզի հավատա, թե «ՀՀ նախագահը հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության եւ անվտանգության երաշխավորն է»: Էլ ինչ «երաշխավոր», որն իր հայեցողությամբ չի նշանակում պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարությունների հանգուցային պաշտոնատարներին:

Սահմանադրության 55-րդ հոդվածի վկայակոչումը, ըստ իս, արվել է հետեւյալ նկատառումներով.

ա) այս հոդվածի 4-րդ կետը վարչապետին վերապահում է կառավարության անդամներին նախագահի հաստատմանը ներկայացնելու իրավասությունը: Այլ պաշտոնյաների մասին խոսք չկա:

բ) 9-րդ կետը վարչապետին իրավունք է տալիս առաջարկել գլխավոր դատախազի թեկնածություն:

գ) 12-րդ կետը սահմանում է, որ նախագահը «զինված ուժերի գլխավոր հրամանատարն է, նշանակում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը»: Եթե «բարձրագույն հրամանատարական կազմ» ասելով նախագահը նկատի է առնում ոչ միայն ՊՆ փոխնախարարներին, այլեւ գլխավոր շտաբի պետի տեղակալներին ու կադրերի գլխավոր վարչության պետին, ապա այս հանգամանքը սահմանադրորեն հստակեցված չէ:

դ) Նախագահի կարգադրության մեջ վկայակոչված Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը նախատեսում է. «Կառավարությունը կազմված է վարչապետից եւ նախարարներից», 3-րդ պարբերությունն ընդգծում է, թե «կառավարության կառուցվածքը եւ գործունեության կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է ՀՀ նախագահի հրամանագրով»:

Ահա այսպես, նախագահը վարչապետին առաջարկում է այսուհետ աշխատել Սահմանադրության պահանջներից ելնելով:

Սակայն չեմ կարող չնկատել, որ նույն Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ կետը, ուր ամրագրված են կառավարության լիազորությունները, նախատեսում է, թե կառավարությունը «ապահովում է հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության իրականացումը», իսկ նույն հոդվածի 7-րդ կետը կառավարությանն է վերապահում «օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների ապահովման, սեփականության եւ հասարակական կարգի պահպանության ուղղությամբ» միջոցներ ձեռնարկելու իրավունքը: Անձամբ ինձ համար այնքան էլ հասկանալի չէ, թե ինչպե՞ս պետք է կառավարությունն այդ ամենն անի, եթե վարչապետը որեւէ «ձայն» չունի տվյալ խնդիրները լուծող պետական պաշտոնատարներին նշանակելու հարցում: Նախագահը պաշտոնի նշանակի, իսկ վարչապետը պատասխա՞ն տա այդ պաշտոնյայի աշխատանքի համար:

Կարծում եմ, Սահմանադրության բարեփոխումների ժամանակ այս հարցերը պետք է հստակեցվեն:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Պայթուցիկ եռօրյա

Սկիզբը էջ 1

Թուրքմենստանի հետ էներգակիրների դիմաց ապրանքափոխանակություն իրականացնելու հինգ գործարքի միջոցով «Դվին» կոնցեռնը շուրջ 1,6 մլն դոլարի վնաս է հասցրել պետությանը: Սա ընդամենը մեկ էջ է հանձնաժողովի աշխատանքից: Եթե ԱԺ-ն համապատասխան կեցվածք ցուցաբերի, ապա նրա վարկանիշը հասարակության աչքերում կարող է էապես բարձրանալ:

Երեկ ընդամենը երկու ձայն չբավարարեց, որպեսզի հրավիրվեր ԱԺ արտահերթ նստաշրջան 1998-2000 թթ. սեփականաշնորհման ցանկում փոփոխություններ կատարելու օրենսդրական նախաձեռնությամբ, որի ներքո Հայկոմկուսի խմբակցության անդամ Խորեն Սարգսյանի, ինչպես նաեւ տարբեր խումբ-խմբակցություններից եւս 53 պատգամավորների ստորագրություններն են: Ըստ այդմ, առաջարկվում է սեփականաշնորհման ցուցակից դուրս բերել 15 մարզային էներգետիկ բաշխիչ ցանցեր՝ Արարատի, Վայոց ձորի, Լոռու, Տավուշի, Կոտայքի, Արագածոտնի, Արմավիրի, Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի եւ Երեւանի: Այս նախագծին կողմ քվեարկեց 42 պատգամավոր, դեմ 7, ձեռնպահ 27: Ամենաղժվարը ՀԺԿ վիճակն է, քանզի ՀԺԿ քաղաքական խորհուրդը բոլորովին վերջերս որոշում էր ընդունել, ըստ որի բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումն այս պահին համարվել էր աննպատակահարմար: «Միասնություն» խմբակցությունը քվեարկությունից առաջ ընդմիջում խնդրեց, որից հետո նրա շատ անդամներ աննկատ լքեցին դահլիճը՝ խուսափելով քվեարկությունից, իսկ ԱԺ խոսնակ Արմեն Խաչատրյանը եւ նրա տեղակալ Գագիկ Ասլանյանը, որոնք ՀԺԿ առաջատար գործիչներ են, քվեարկեցին ձեռնպահ: 44 ձայն էր պետք արտահերթ նիստ հրավիրելու համար: Արշակ Սադոյանը որոշեց իր ձեռքը վերցնել նախաձեռնությունը, եւ ըստ ամենայն հավանականության, այսօր-հարցը նորից կդրվի քվեարկության, եւ բաշխիչ ցանցերը սեփականաշնորհման ցուցակից դուրս բերելու նիստը կգումարվի:

ԱԺ-ն մերժեց նաեւ «Օրինաց երկիր» խմբակցության օրենսդրական նախաձեռնությունը դեկտեմբերի 1-ից մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում, երբ մեր հանրապետության որոշ երջանիկ շրջաններ ջեռուցվում են, էլեկտրաէներգիայի միասնական սակագին սահմանելու մասին: Առավել հասկանալի խմբակցությունն առաջարկում էր այս շրջանում էլեկտրաէներգիայի սակագնից դուրս բերել ավելացած արժեքի հարկը եւ 1 կվտ համար 20 դրամ սահմանել 25-ի փոխարեն: Ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Գագիկ Արզումանյանը հիմնավորեց պետության կրելիք վնասներ, իսկ փոխխոսնակ Գագիկ Ասլանյանը ընթերցեց վարչապետի ուղերձը, ըստ այդմ կնվազեն պետության եկամուտները, եւ կաճեն ծախսերը, ուստի Արամ Սարգսյանը պնդեց, որ օրինագծի ընդունման համար անհրաժեշտ է 66 ձայն, որն էլ բնականաբար չապահովվեց: Իրավիճակը բավական երկիմաստ էր, քանզի Արքուր Բաղդասարյանն առաջարկում էր այս օրենքն ընդունել 2001 թ.-ից, իսկ 2001 թ.-ի բյուջեն դեռեւս հայտնի չէ, բայց չեղած բյուջեի ծախսերն ու եկամուտները պատգամավորները որոշեցին պաշտպանել ի վնաս սոցիալապես անապահով խավերի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՊԱՏԱՍԽԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Նոր օրենքը՝ նոր իրողությունների արդյունք

«ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների մասին» օրենքի ընդունումից հետո Ա. Ժ նախագահ Օլեգ Եսայանը մարտի 18-ին մամուլի ասուլիս հրավիրեց Ստեփանակերտում: Ըստ Օ. Եսայանի, դա նրա խորհրդարանական երկամյա իշխանակալության ընթացքում երրորդ ասուլիսն է, որի առթիվ Ա. Ժ նախագահն արտահայտվեց ինքնաքննադատաբար:

Անցած 8 տարում ԼՂՀ խորհրդարանը ընդունել է 186 օրենք, որից միայն 19-ն է ընդունվել առաջին գումարման ԳԽ-ում, իսկ ահա 104 օրենքներ երկրորդ խորհրդարանի կողմից ընդունվել են միայն անցած 2 տարում: Թվային այս ցուցանիշները մատնանշելով, սակայն, Օ. Եսայանը միաժամանակ նշեց, որ վիճակագրական այդ տեղեկությունները ոչ թե համադրելու համար են, այլ փաստելու, որ առաջին խորհրդարանի պայմաններն անհամեմատ վատ էին: Դրանք համընկնում էին պատերազմական ժամանակաշրջանի հետ, ավելացրած նաև այն հանգամանքը, որ ԼՂՀ Գերագույն խորհուրդը 1992 թ. հունվարին ստեղծվել է անփորձության բաց դաշտում:

Ինչ մնում է հանրապետության երկրորդ խորհրդարանին, ապա, Օ. Եսայանի հավաստմամբ, զգալի աշխատանք է կատարվել: Մասնավորապես, ընդունվել են սոցիալ-տնտեսական, պաշտպանության, դատական, կառավարման համակարգի ձևավորման, մշակույթի ոլորտները ներառող կարևոր օրենքներ, ամրապնդվել է միջխորհրդարանական կապը ՀՀ Ազգային ժողովի հետ: Ակտիվացել է ներխորհրդարանական կյանքը, տարաբնույթ թեմաներով սեմինար-խորհրդակցությունները դարձել են ավանդական:

Վերջին տարիներին Ա. Ժ մտած դիմումների թիվը կրկնապատկվել է, որոնք բոլորն էլ ընթացավորվել են կամ համապատասխան լուծում ստացել:

Պատգամավորների հասարակական-քաղաքական որոշակի ակտիվության մասին է վկայում այն փաստը, որ խորհրդարանի անդամների 40 տոկոսը ներկայացնում են ԼՂՀ-ում գործող առավել ազդեցիկ չորս կուսակցություններ: Անցած տարիներին Ազգային ժողովը կառուցվածքային բարեփոխումների է ենթարկվել, իսկ խորհրդարանի նյութատեխնիկական բազան հարստացել:

Այս բարեփոխումները նշելով հանդերձ, Օ. Եսայանը անբավարար համարեց խորհրդարանի վերահսկողական գործառույթը: Նա կարևորեց Ա. Ժ-ի ներքաղաքական կյանքում եւ արտաքին քաղաքականության մեջ ունեցած դերի բարձրացման անհրաժեշտությունը: Իշխանությունների տարբեր ճյուղեր, ինչպես նաեւ պատգամավոր-ընտրող կապերը հետագա հստակեցման ու ամրապնդման կարիք ունեն:

Եթե ընդհանրացնենք 2-րդ գումարման գործունեությունը, ասաց Օ. Եսայանը, խորհրդարանն անցել է իր ճանապարհը, նպաստել ԼՂՀ կայացման գործընթացին եւ բավարար հիմքեր ստեղծել հաջորդի համար:

Անդրադառնալով առաջիկա խորհրդարանական ընտրություններին, Օ. Եսայանը նախ իր դժգոհությունն արտահայտեց ընտրությունների ժամկետի վերաբերյալ հայաստանյան մամուլում տեղ գտած որոշ անիրազեկ հրապարակումների կապակցությամբ:

Ըստ գործող օրենքի, ընտրությունները պետք է տեղի ունենան խորհրդարանի իրավասության ժամկետը լրանալուն նախորդող 80 օրվա ընթացքում: Այս տեսանկյունից, ընդգծեց Ա. Ժ նախագահը, ԼՂՀ խորհրդարանի գործունեության ժամկետը լրանում է հունիսի 23-ին, եւ մարտի վերջին կամ ապրիլի սկզբին վերջնականապես կորոշվի ընտրությունների օրը:

Օ. Եսայանը որոշ պարզաբանումներ տվեց ընտրական օրենքի առթիվ:

Կանխապես քննարկման էր դրված երկու նախագիծ: Դրանք իրարից տարբերվում էին ընտրակարգի մեծամասնական եւ մեծամասնական-համամասնական տեսակետներով: Քննարկումներից հետո ձայների մեծամասնությամբ ընդունվեց առաջին տարբերակը:

Ինչո՞ւ կիրառելի չդարձավ համամասնական ընտրակարգը: Ա. Ժ նախագահը հարցը մեկնաբանեց այսպես: ԼՂՀ-ում կուսակցությունները դեռեւս զտնվում են կայացման փուլում, եւ ոչ որ պատրաստ չէ քաղաքական մեծ բեռ ստանձնելու: Բացի այդ, մեծամասնական ընտրակարգը բնավ չի խոչընդոտում կուսակցապատկան թեկնածուներին ակտիվորեն մասնակցելու ընտրարշավին:

Ի տարբերություն նախորդ ընտրական օրենքի (1994 թ. ընդունված), նոր օրենքում հստակ ձեւակերպված է ընտրությունների վերահսկման մեխանիզմը: Իսկ ընդհանուր առմամբ, հիմնված է ՀՀ ընտրական օրենքի վրա, Արցախի իրական պայմանների հաշվառումով:

Ա. Ժ նախագահը պատասխանեց լրագրողների հարցերին: «Ազգի» թղթակցի այն հարցին, թե լրատվամիջոցներին ի՞նչ դեր է հատկացվել ընտրությունները թափանցիկ դարձնելու գործում, Օ. Եսայանը հավաստիացրեց, որ լրատվամիջոցները պետական թե անկախ, ոչ մի սահմանափակումներ չեն ունենա: Ավելին, իրենք հակված են չորրորդ իշխանության լայն աջակցությունը ստանալու, որի կապակցությամբ առաջիկայում իր վերաբերմունքը կարտահայտի ԿԸՀ-ն:

«Ազգի» թղթակցի երկրորդ հարցը ուղղված էր անձամբ Օլեգ Եսայանին: Նախագահի՞ նա անձամբ ընտրարշավին: Ա. Ժ նախագահը ոչ միանշանակ պատասխանեց. «Դա կորոշեմ ԼՂՀ նախագահի կողմից օրենքը ստորագրելուց եւ հրապարակվելուց հետո»:

ԵՂԻՇԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ստեփանակերտ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան՝ անցանկալի անձ Հայաստանում»

Պահանջում են 4 կազմակերպություններ

Երեկ Հայաստանում գործող մի քանի կազմակերպություններ՝ «Ազգայնական» ակումբը, «Ներդաշնակ աշխարհ» միջազգային ֆոնդը, «Նժդեհյան ցեղակրոն» կուսակցությունը, «Վասպուրականի նոր սերունդ» պատմամշակութային հայրենակցական միությունը հանդես են եկել հայտարարությամբ, որով ՀՀ ԱԳՆ-ից պահանջում են երեկ Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրային:

Նման հայտարարության առիթ է հանդիսացել պրն դեսպանի «Սնարին» տված հարցազրույցը՝ տպագրված «Ազգ» եւ «Նովոյե վրեմյա» թերթերի մարտի 11-ի համարներում: Վերոհիշյալ կազմակերպությունները գտնում են, որ հարցազրույցում Ֆրանսիայի կողմից Հայոց ցեղասպանության հարցի շուրջ խոսելիս պրն Լեգրան թույլ է տվել հայի ազգային արժանապատվությունը խորապես վիրավորող արտահայտություններ, խախտել է ցեղասպանության հանցագործների դատապարտման մասին միջազգային իրավական նորմերը:

Բողոքող կազմակերպությունները դատապարտելով Միշել Լեգրային՝ ՀՀ ԱԳՆ-ից պահանջում են ոչ միայն վերջինիս հայտարարել persona non grata, այլեւ «ետ կանչել ՀՀ դեսպանին Ֆրանսիայից, վերանայել ղարաբաղյան հարցի կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբում Ֆրանսիայի հետագա մասնակցության նպատակահարմարությունը, քանի դեռ Ֆրանսիան պատշաճապես ներողություն չի խնդրել հայությունից»:

«Հայաստանի Հանրապետությունն իր տերն ունի՝ հայ ժողովուրդը: Իսկ ՀՀ իշխանությունները պարտավոր են հայ ժողովրդի կամքն արտահայտել», նշում են կազմակերպությունները հայտարարության մեջ՝ կոչելով հայությանը երբեք չմոռանալ, որ Ֆրանսիան անմիջական պատասխանատվություն է կրում 1915-ի Հայկական ցեղասպանության, Կիլիկիայի հայության կոտորածների ու տեղահանության, այսօր էլ ղարաբաղյան խնդրի շուրջ թուրքանպաստ պահվածքի համար:

Ստրատեգ անձնական շահերը եւ համատեղվեք

Կոչում է «Հզոր հայրենիքը»

«Հզոր հայրենիք» կուսակցության վարչությունը հանդես է եկել մի հայտարարությամբ, որտեղ վկայակոչելով երկրի ծանր ներքաղաքական կացությունը, իշխանությունների կաթվածահար վիճակը, օր-օրի խորացող համընդհանուր ճգնաժամը, դիմում է հանրապետության իշխանություններին, քաղաքական ուժերին, պետական մարմիններին, պաշտոնատար անձանց՝ կոչելով «մի կողմ դնել նեղ անձնական շահերն ու համատեղել բոլոր կարող ուժերը՝ երկիրն այս վիճակից դուրս բերելու համար»: «Հզոր հայրենիքը» պատրաստակամություն է հայտնում աջակցել հանրապետության բոլոր առողջ ուժերին՝ ի սպաս հակաճգնաժամային արտակարգ ու անհետաձգելի միջոցառումներին: Հայտարարության տեքստում անդրադարձ կա նաեւ ՀՀ նախագահի վերջին քայլերին, որոնք կուսակցությունը դիտում է որպես ՀՀ սահմանադրությամբ երկրի նախագահին վերապահված լիազորությունների իրականացում եւ իշխանության տարբեր թեւերի սահմանադրական իրավասությունների ու պարտականությունների հստակեցմանն ուղղված ծեռնարկումներ:

Այնուամենայնիվ գյուղը չեն լքում

Շիրակի մարզի Թորոս գյուղը տարածաշրջանի այն հազվագյուտ համայնքներից է, որտեղ գրեթե արտագաղթ չկա (գյուղն ունի 320 բնակիչ՝ 123 տնտեսությամբ): Չնայած դրան, բնակչության 70 տոկոսը սոցիալապես անապահով է, 30 տոկոսը՝ ծայրահեղ վիճակում: Իտալացիների կառուցած բուժամբուլատորիան, գրադարանը եւ բյուջետային այլ կազմակերպությունները փոքր թվով աշխատատեղեր են ապահովում: Աշխատանք չունեցող 23 բարձրագույնավարտները ստիպված են զբաղվել անասնապահությամբ եւ հողագործությամբ: Ցածր արդյունավետություն ունեցող աշխատանքը գյուղացուն անվճարունակ է դարձրել, որի հետեւանքով դժվարությամբ է համալրվում գյուղի բյուջեն: Նշենք նաեւ, որ գյուղացին ինքն է վերամշակում իր արտադրած կաթը: Ադրանքային արտադրության մասին խոսք լինել չի կարող, քանի որ առայժմ մի կերպ բավարարում են սեփական կարիքները: Գյուղում խոշոր ստեղծություններ չկան, իսկ նորի ստեղծման համար պայմաններ են հարկավոր: Ի դեպ, Թորոսը, որը Ասոցի նախկին շրջանի միջին չափի գյուղերից է, ուներ նաեւ շինարարական կազմակերպություն, որը 30–40 աշխատատեղ էր ապահովում: Ներկայումս այն լուծարվել է, իսկ նորի ստեղծումը հեռանկարային ծրագիր է:

ՆԵԼԼԻ ԱՍՏՎԱԾՅԱՆ

ՀԱՐԾԱԳՐՈՒՄ

Աշխատավարձերի վճարումը սկսել ստորին օղակներից

Ռուսներն ասում են՝ ոչինչ չանելու համար կարելի է գտնել հազար ու մի պատճառ: Սակայն ամենաառարկայական թվացող պատճառներն իսկ մի՞թե արդարացնում են, երբ մարդն աշխատում է, բայց մի քանի ամիս եւ ավելի աշխատավարձ չի ստանում: Ցավն այն է, որ դա գործի պատասխանատուների կողմից, կառավարման տարբեր օղակներում վաղուց չի համարվում արտակարգ դեպք, ոչ որ դրա համար իրար չի խառնվում, ոչ որ չի պատժվում: Ասում են՝ չկա եւ վերջ: Ինչպես **«Ազգի»** թղթակցի հետ զրույցում նկատեց Գյումրիի քաղաքապետարանի շախտայի մարզադպրոցի տնօրեն Հասմիկ Խալիկյանը, նման դեպքերի համար գոյություն չունի կարգավորող օրենսդրական մեխանիզմ. ոչ կարող ես պահանջել, ոչ էլ որեւէ քայլ անել: Մարզադպրոցի աշխատակազմը 16 մարզիչներն ու մյուս աշխատողները (մոտավորապես նույնքան մարդ) վերջին անգամ աշխատավարձ են ստացել անցյալ տարվա օգոստոս ամսին: Արդեն յոթերորդ ամիսն է՝ չեն տրամադրվել նաեւ դպրոցի կենսագործունեության մյուս ծախսերի համար նախատեսված գումարները: Վճարողը քաղաքապետարանն է, որն իր հերթին այս վիճակը պատճառաբանում է համայնքին տրվող պետական լրավճարի անցյալ տարվանից մնացած գումարների ուշացումով: Տուժողը դրանում ոչ մի մեղք չունեցող, իր գործը բարեխղճորեն կատարող «շարքային» աշխատողն է, որն այս դեպքում իր ընտանիքով հանդերձ հայտնվել է ինչ-որ տեղ գործազուրկից ու նպաստառուից էլ անհույս վիճակում:

Եվ վերջին հաշվով այստեղ տուժողը ոչ միայն նրանք կարող են լինել: Գյումրիի կենտրոնում գտնվող, շենքային հարմարավետ պայմաններ ունեցող շախտայի տուն-մարզադպրոցը ողջ Շիրակի մարզին ծառայող կրթադաստիարակչական հաստատություն է եւ մեր հանրապետությունում այդ իմաստով խաղի տարածման, զարգացման մի հեղինակավոր կենտրոն: Այսօր ոչ միայն Գյումրիից, այլեւ մարզի այլ բնակավայրերից այստեղ հաճախում են մոտ 400 պատանիներ ու աղջիկներ, որոնց թվում են եւ մտավոր մեծ ներուժ ունեցող, եւ դժվար դաստիարակվող համարվող երեխաներ: Նրանց բոլորի հետ սիրով աշխատում են մարզիչները: Կանոնավորապես կազմակերպվում են մարզական միջոցառումներ, մրցաշարեր ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների համար, հաճախ չստանալով իսկ նախատեսված նպաստային գումարները՝ պահովվում է նաեւ սաների մասնակցությունը հանրապետական միջոցառումներին: Վերջին տարիներին, դպրոցը տվել է շախտայի գծով սպորտի երեք միջազգային վարպետ (մեկը՝ գրոսմայստերական միավորներով), հանրապետական ու միջազգային մրցաշարերի հաղթողներ: Այստեղից են Երեւանի անցյալ տարվա չեմպիոնն ու չեմպիոնուհին: Այնպես որ՝ այս կարգի հաստատությունն արժանի չէ նման վերաբերմունքի, այլ ընդհակառակը, պետք է որ ավելի լուրջ ուշադրության արժանանա: Իսկ տվյալ դեպքում խոսքը նույնիսկ մեծ գումարի մասին չէ: Մարզադպրոցի կոնկրետ աշխատավարձի ֆոնդը ամսական ընդամենը 200 հազար դրամ է:

Այսքան երկար ձգձգված ֆինանսավորման հարցով զբաղվելով մշակույթի եւ սպորտի նախարարին, հանրապետության վարչապետին՝ տնօրենությունը նաեւ խնդրել է Գյումրիի շախտայի մարզադպրոցը չթողնել գործազուրկ քաղաքի աղքատիկ բյուջեի հույսին, ու նկատի առնելով վերը շարադրվածը, դպրոցին տալ հանրապետական կարգավիճակ:

Իսկ սկզբունքորեն տնօրեն Հասմիկ Խալիկյանն առաջարկում է հանրապետությունում աշխատավարձերի վճարումը սկսել ստորին օղակներից՝ ներքեւից վերեւ հերթականությամբ: Թվում է այդպես բոլոր առումներով ավելի շահեկան ու ճիշտ կլինի...

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԱՆ,
Գյումրի

Գերմանիա

Քամուց՝ Գերմանիա ճչվածները

Ապրիլի 16-ին Ֆինլանդիայում կայացած հանդիպման ժամանակ ասացին եվրոպական երկրների ղեկավարները՝ նկատի ունենալով փողերի լվացման, կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի, փախստականների օրեցօր աճող մեծացող խնդիրները: Վերջիններս Արևմուտք մրրկի նման են գալիս: Գերմանիայում մերժվում են, փախչում են Հոլանդիա, այստեղ էլ բախտը չի ժպտում Բելգիա կամ Ֆրանսիա, կամ Ավստրիա... «Ավստրիան ավստրիացիներին» կարգախոսով ցույցերը վերջին ընտրություններում «նեոֆաշիստական համարվող «Ազատություն» կուսակցության համար խորհրդարանում երկրորդ տեղ ապահովեցին: Ոչ միայն Ավստրիայում, Գերմանիայում, Բելգիայում, Ֆրանսիայում նման կարգախոսներն այսօր հաճախադեպ են, գնացեք, մենք ձեր աշխատուժի կարիքը չունենք, մեր մեքենայացված տնտեսությունը մեզ է փողոց շպրտել: Բայց դե, «կուշ ի՞նչ գիտի սովասի կյանքը», փակ դռներից մի ձեղք են գտնում սողոսկելու ու... մի կերպ փորձում տեղավորվել եվրոպական կեղեւի մեջ: Ու մեկ անգամ արդեն կեղեւված իրենց կյանքը ինչպե՞ս է «դարմանվում» այս ավելի չոր պայծանի ներսում, լրագրողի գրչից առավել հոգեբան-հասարակագետ-բժշկի հետազոտությանն է սպասում:

Պրահայում լույս տեսնող հայկական «Օրեր» ամսագիրը, որի խմբագիրն է «Ազգի» հիմնադիր-աշխատակից Հակոբ Ասատրյանը, վերջերս միայն մեզ հասած համարում (2, 1999 թ.) տպագրել է եվրոպական մեր մյուս թղթակցի Գերմանիայում աշխատող Անահիտ Հովսեփյանի հոդվածը գերմանահայ համայնքի մասին: Ամիսներ առաջ գրված հոդվածն այժմ էլ հրատապ է հեղինակի դիտարկ գրչի շնորհիվ, առավել եւս, որ վերաբերում է մշտապես մտահոգիչ արտագաղթին:

Ուշխարհում շատերն են ձգտում 2000-ի գիշերը Երուսաղեմում դիմավորել: Հայերը... «Մինչեւ 2000 թվականը ով Եվրոպա ընկավ, մնալու իրավունք կստանա», ասում են Հայաստանում ու աշխատում «փրկվել»: Եվրոպան նրանց չի սպասում, հակառակը՝ տինդ-տինդ փակում է դուռ ու պատուհան, որ օտար քամիներ սահմաններից ներս չխուժեն: Ավելին՝ արդեն կա միասնական ռազմավարություն, հինգ տարում խոստանում են մեր քաղաքացիների կյանքն ավելի ապահով դարձնել, հոկտեմբերի 16-ին Ֆինլանդիայում կայացած հանդիպման ժամանակ ասացին եվրոպական երկրների ղեկավարները՝ նկատի ունենալով փողերի լվացման, կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի, փախստականների օրեցօր աճող մեծացող խնդիրները: Վերջիններս Արևմուտք մրրկի նման են գալիս: Գերմանիայում մերժվում են, փախչում են Հոլանդիա, այստեղ էլ բախտը չի ժպտում Բելգիա կամ Ֆրանսիա, կամ Ավստրիա... «Ավստրիան ավստրիացիներին» կարգախոսով ցույցերը վերջին ընտրություններում «նեոֆաշիստական համարվող «Ազատություն» կուսակցության համար խորհրդարանում երկրորդ տեղ ապահովեցին: Ոչ միայն Ավստրիայում, Գերմանիայում, Բելգիայում, Ֆրանսիայում նման կարգախոսներն այսօր հաճախադեպ են, գնացեք, մենք ձեր աշխատուժի կարիքը չունենք, մեր մեքենայացված տնտեսությունը մեզ է փողոց շպրտել: Բայց դե, «կուշ ի՞նչ գիտի սովասի կյանքը», փակ դռներից մի ձեղք են գտնում սողոսկելու ու... մի կերպ փորձում տեղավորվել եվրոպական կեղեւի մեջ: Ու մեկ անգամ արդեն կեղեւված իրենց կյանքը ինչպե՞ս է «դարմանվում» այս ավելի չոր պայծանի ներսում, լրագրողի գրչից առավել հոգեբան-հասարակագետ-բժշկի հետազոտությանն է սպասում:

Ուշխարհի 6 միլիարդ կազմող բնակչության ամեն մի 120-րդը սփռված է փախչել սեփական երկրից: 29 հազար քառ. կմ մակերես ունեցող Հայաստանից քանիսի՞ բախտն է բերում ԳԴՀ-ի 357 հազար քառ. կմ մակերեսի վրա տեղավորվելու, դժվար է ասել: Անընդհատ մտնում-դուրս են գալիս, եւ եթե նախորդ տարի այստեղ անպատշաճ խոսվում էր 7-10 հազար հայ փախստականի մասին, այսօր այդ թիվն անկասկած ավելի մեծ է: Վիճակագրական վերջին տվյալներով, Հայաստանն իր փախստականների թվով 5-րդ հորիզոնականն է գրաղեցնում (1999-ի հունվարից հուլիս 2 հազար 138 փախստական է Գերմանիա մուտք գործել): Առաջինը Հարավսլավիան է, հետո Թուրքիան, որտեղից հիմնական է միգրանտները քրդերն են, հետո Իրանն ու Աֆղանստանը: Երեւանի գերմանական դեսպանատունը մերժման կնիքը հենց անձնագրում է դրոշմում: Փոխում են նոր անձնագիր՝ նոր ազգանուն, մեծավ մասամբ տուն-տեղ «ջրի գնով» վաճառում են, որ ճանապարհի փող ունենան: Ու եթե առաջ տղամարդկանց հոսքն էր առավել մեծ, այսօր ընտանիքների: Առաջ քաղաքներից էին գալիս, հիմա գյուղերն էլ են դատարկվում: Գալիս են օդանավով, գնացքով, ավտոբուսով՝ փորձիկ մի հույսից կառչած՝ Հայաստանը Եվրոպայի ճանապարհն է բռնել, ուրեմն իրենց կողմնացույցն էլ սխալ ուղղությամբ չի տանում:

«Որտեղի՞ց նման ինֆորմացիա: Մենք՝ 6 տարի Գերմանիայում ապրողներս նման բան չենք լսել», զարմանում են դեռեւս անորոշ ճակատագրի տեր դատարանի վճռին սպասող նախկին հայաստանաբնակները՝ մինչեւ 2000 թվականը Եվրոպա եկածներին քաղաքացիություն տալու մասին լուրը ճնշարկելով: Օրենքներն անընդհատ փոխվում են, եւ դժվար է երեւակայել, թե իր արեւելյան հատվածի «պարտեզը» չմարած Գերմանիան անաշխատների հիասթափության նոր ալիքի պակաս է զգում: Դեռ մի քանի ամիս առաջ հայ փախստականների մի մեծ խմբի հենց սահմանից ետ ուղարկեցին: «Ինձ լավ բացատրեին, որ այդպես էլ է լինում, ոչինչ չէի դիմի», արդեն Հայաստանից հեռախոսով բողոքել էր տարիքն առած մի տղամարդ Գերմանիայում ապաստանյալի իրավունք ստացած իր ազգականին: Փորձառուները համառել էին գնալ Ավստրիա, միգուցե այնտեղ ստացվի, մի փոքր աշխատելու հույսն էլի ապարդյուն էր անցել:

«Վերադարձողները գունավոր հեքիաթներ չեն պատմում: Բայց հոգնած ու անհաց զանգվածին դրսում կորցնելու վախն առավել հեռու է թվում, քան հայրենիքում ընտրությունից ընտրություն սպասելը», ասում է զրուցակիցս Հայաստանից 93-ին դուրս եկած եւ ապաստանյալի իրավունք ստացած մի քաղաքացի: «Ինչքան էլ «լեկցիա» կարդաս, թե վատ բան է, մի գնա, լեզուդ չի պտտվում, մարդը չի կարողանում ապրել: Սա մի անգամ եւս մեզ վրա ծանր բեռ է դնում, որ բոլորս պիտի ամեն ինչ անենք, որ պետությունը պետություն լինի», սեպտեմբերի 5-ին Քյոլնում հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ ասաց Աժ նախագահ Կարեն Դեմիրճյանը: Վերջինս չհամաձայնեց, թե նաեւ իր ընտրազանգվածն է ճամպրուկները կապել, հեռանում Հայաստանից:

«Դեմիրճյանին լավ ենք ճանաչում, մի ժամանակ մեզ լավ էր պահում, մտածեցինք ինքը մի բան կանի, գործ կտա, պարապ չենք մնա: Մեկ ամիս անցավ, երեք... Միայն խոսում են: Վազգեն Սարգսյանը «քրջի» շուկա եկավ, հուզվեց: Եթե ժամանակին գրիչ է բռնել, ժողովրդի բերանն էլ օրինանք դրեց, հետո՞... Վերջ, ես ինձ եմ հավատում, ասացի մեկ ամիս առաջ, տունս 2000 թվականի գործերի նախարարության դեռեւս անցյալ տարի մեզ տրամադրած գնահատականը փախստական հայերին որեւէ հանցագործ խմբի մեջ չի տեղավորում, եթե դեմքեր էլ կան, որակ չեն կազմում: Փոխարենը որակական ատրիբուտ է դառնում միավոր չլինելու անխուսափելի հիվանդությունը: «Ես հավատար եմ բոլորին» մխիթարական դատողությամբ հանդես եկող «ուժեղներն», այնուամենայնիվ, անկեղծության պահերին անցյալից եկած արժեւորման մի հուշով թուլանում են: «Բա մենք սենց էինք ապրում՝ կիլոներով կա լսեցի, ավելի փոքր տղաների էլ, պատասխանը նույնն էր՝ չեմ ուզում գնալ: Այս երեխաները մեծերի նման համեմատելու եզրեր էլ չունեն: ինչ ծնվել են, հացի փոխարեն Հայաստան տանը ներկա է թշվառության ու անորոշության մոխրագույնը, ու այնքան տիրապետող, որ հիշողության մեջ բոլոր մեծացած պայծառ նրբերանգները կուլ է տվել: Երեխաները լեզուն հեշտ են սովորում: Գոնե իրար հետ հայերեն խոսելու ծնողների պարտադիր պահանջը հաճախ երեք բառի սահմանից չի անցնում: Մանկապարտեզում խաղի լեզուն գերմաներենն է, դպրոցում խնդիրը լուծելու գերմաներեն մտածողությունն ինքնըստինքյան հաստատվում է: Հաղթեթ կապված ճամպրուկների մեջ թե հայերեն մեկ-երկու գիրք դրվեր էլ, միեւնույն է, չէր կարդալու: Մոգական ուժ ունեցող ուրիշ զբաղմունքներ կան, որոնց մագնիսական ձգողությունը երկու ծովերի արանքում ընկած փոքրիկ երկրի մասին երբեւէ հիշատակ չի անում: Նորի՞ց կորած սերունդ... Ինչ անուն էլ դնեք, մեղքի մի մեծ բաժին ձեր ու իմ վրա է ծանրանալու, որ 10 տարում չկարողացանք նրանց Հույսի երկիր ժառանգել:

Հեգզրության փոխարեն

Արտագաղթի մասին այսօր Հայաստանում շատ են խոսում: Ճանաչված գրողն ահազանգում է, Աժ պատգամավորը դրա մեծ չափերի համար մեղադրում է լրագրողներին, հասարակագետ-գիտնականը իշխանություններին կոչ է անում մեխանիզմներ մշակել: «Չկա չարիք առանց բարիքի, արտագաղթը փրկեց Հայաստանը, բայց հասել է այն սահմանը, որ կարող է երկրի ազգային անվտանգությանը սպառնալ, վաղը բանակ չենք ունենա», «Ազատություն» ռադիոկայանին տրված հարցազրույցում հայտարարեց Վանո Սիրադեղյանը: «Ներգաղթից ենք խոսում... Բայց ո՞վ մեզ փողոց շպրտեց, ասում է յոթ տարի առաջ Գերմանիա եկած 7 հոգանոց ընտանիքի հայրը: Բոլորս՝ 1990-ից հետո դուրս եկածներս Հայաստանի բյուջեի չափ փող ենք ուղարկում: Գնանք՝ մեծ հոգս ենք դառնալու...»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Բոնն, Գերմանիա

Մարտի 26-ին Թուրքիայի «Ցեղասպանության ընդդիմադիրների» շարժումը Ֆրանկֆուրտում կազմակերպում է հավաք նվիրված 1955 թ. Ստամբուլի վայրագ իրադարձություններին

Մարտի 26-ին Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում տեղի կունենա ցուցահանդես-հավաք նվիրված 1955 թ. Ստամբուլում տեղի ունեցած վայրագ իրադարձություններին, որոնք այն ժամանակ ցնցեցին քաղաքակիրթ աշխարհը: Սեպտեմբերի 6-7-ին հազարավոր թուրք ազգայնամոլներ, հարձակվելով հայերի, հույների, հրեաների, ասորիների առեւտրական ու մշակութային հաստատությունների վրա, թալանեցին, քարուքանդ արեցին ամեն ինչ: Այս ամոթի խարանը մինչեւ օրս էլ ծանր է նստել Թուրքիայի մտավորական, առաջադեմ գործիչների վրա, որոնք արդեն իսկ հսկայական զոհողությունների գնով ճանաչել տալու 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, երկխոսություն սկսելու հաշտության եւ հաշտեցման հարցերը կարգավորելու համար, այժմ կազմակերպում են այս կարեւոր քաղաքական իրադարձությունը:

«Ցեղասպանության ընդդիմադիրների» շարժումը, որը գլխավորում է Գերմանիայում վարանդի թուրք բանվոր Ալի Էրթեմը, գլխավոր հոգացողն ու կազմակերպիչն է այս հավաք-ցուցահանդեսի: Հրավիրյալների շարքում են նաեւ թուրք մտավորական ու լրագրող, «Մուսա լեռան 40 օրը» թուրքերեն տպագրած Ռագըբ Զարաֆյանը, Թուրքիայի մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահ Սիին Բիրդալը, Փարիզի «Հայկական սփյուռքի ուսումնասիրությունների կենտրոնի» պատվիրակությունը՝ գլխավորությամբ ժան-Կլոդ Քեբաբջյանի, նաեւ «Ազգի» հատուկ թղթակիցը, որը հաղորդելու է այս քաղաքական կարեւոր իրադարձության մասին: Հիշեցնենք, որ Ֆրանկֆուրտի միջոցառմանը մասնակցող թուրք եւ հայ գործիչներից շատերը մասնակցելու են հունիսի 17-ին Ֆրանսիայի Սենատում տեղի ունենալիք «1915 թ. ճանաչման եւ հաշտության» խորհրդաժողովին, որն առաջին անգամ է տեղի ունենում արդի պատմության մեջ:

Հուսով ենք, որ Հայաստանի եւ սփյուռքի ղեկավար շրջանակները հայ ժողովրդի համար այս ճակատագրական օրերին լրջությամբ հաշվի կառնեն այսպիսի կարեւոր քաղաքական զարգացումների հեռանկարները: Մեր պարտականությունն է աջակցել Թուրքիայի այս կարգի շարժումներին ու գործիչներին, որոնք Ալի Էրթեմի նման արդեն իսկ Գերմանիայի բյուրավոր թուրք բանվորներից հաշտություն են հանգանակում 1915 թ. եղեռնի զոհերի համար:

Հ. ՊՈՍԿՈՓՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

ՇԻԼԻ

Պինոչետի նոր մարտահրավերը

Սանտյագոյի օդանավակայանում օրերս ինֆնաթիռից իջած եւ այնուհետեւ ռազմական ուղղաթիռով զինվորական հոսպիտալ թռած Աուգուստո Պինոչետը զարմացրեց չիլիացիներին. զառամյալ նախկին բռնաղեսը, ասես մի հրաշագործ ուժի զորությամբ, ազատվել էր հաշմանդամի սայլակից եւ քայլում էր, ճիշտ է, ծեռնափայտին հենվելով, բայց առույգ: Ոչինչ չէր մնացել բրիտանական վերադարձն է, որ մտահոգիչ տեղաշարժեր է առաջացնում», ասում է ֆրանսիացի դիվանագետներից մեկը: Իրոք, բանակի կազմակերպած հանդիսավոր ընդունելությունն արդեն վտանգում է Պինոչետի բացակայության ամիսներին Չիլիում հնարավոր դարձած խոշոր նվաճումներից մեկը՝ այսպես կոչված «Երկխոսության սեղանը», երբ իրավապաշտպանները եւ երիտասարդ սպաները համատեղ ճնշում են երկրի անցյալին առնչվող հարցեր: «Օդանավակայանի արարողությունը լիովին հակասում է մեր նպատակներին», հայտարարեց իրավապաշտպան փաստաբան Պամելա Պերեյրան ֆրանսիական «Պուեն» հանդեսի թղթակցին:

Պինոչետի վերադարձը հիշեցնում է մի դառն իրողություն. Չիլիում բանակը փաստորեն դուրս է մնում հասարակությունից, քանի որ ենթակա չէ որեւէ վերահսկողության: 1980 թ. Պինոչետի օրհնությամբ գրված սահմանադրությունը զինվորականներին տալիս է քաղաքական, վարչական եւ նույնիսկ ֆինանսական չափազանց լայն իրավասություն: Մինչդեռ մարտի 11-ին իր պաշտոնավարությունն սկսած նոր նախագահ Ռիկարդո Լագոսը ջանում է ապացուցել, որ Չիլին ժողովրդավարական երկիր է, որտեղ «զինված ուժերը կարգապահ են եւ հնազանդ»: Բայց նախագահին ստիպված կլինի բանակցել զինված ուժերի նոր գլխավոր հրամանատար Ռիկարդո Իսուրիետայի հետ: Գեներալ Իսուրիետան, որը մինչեւ վերջերս բարեփոխականի համբավ ուներ, որոշ չափով հեղինակազրկվել է օդանավակայանի «ներկայացումից» հետո:

Չիլիացի դասավոր Խուան Գուսմանը պահանջում է վերացնել ցկյանս սենատոր Աուգուստո Պինոչետի անձեռնմխելիությունը: Այդ դեպքում հնարավոր կլինի ընթացք տալ նրա դեմ ուղղված տասնյակ հայցերին: Բողոքարկման դատարանը պետք է այս առնչությամբ արտահայտվի մեկուկես ամսվա ընթացքում: Դրանից հետո հնարավոր է բողոք-դիմում ներկայացնել գերագույն դատարան: Ընդամենը 16 ամսվա պատմություն ունեցող այս արարողակարգն արդեն իսկ հաղթանակի հույսեր է ներշնչում բռնապետության զոհերին:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ

Լեհաստանում վիճում են պոռնկագրության շուրջ

Լեհաստանի խորհրդարանը մարտի սկզբներին ընդունեց մի օրենք, որով երկրում արգելվում է պոռնկագրությունը: Օրենքի ընդունումը դառնություն պատճառեց մանավանդ տարփական ֆիլմեր վաճառահանող ֆիրմաներին: Դրանցից մեկի՝ «Կրոֆիլմի» տնօրենը դժգոհ հայտարարեց. «Շուկան չի հանդուրժում դատարկություն: Մեր տեղը կգրավի մաֆիան, որը մեր նման օրինակելի հարկատու չէ»:

Լեհաստանում տարեկան արտադրվում է վեց տասնյակ տարփական ֆիլմ: Նոր օրենսդրությամբ երկու տարվա բանտարկություն է նախատեսվում պոռնկագրական պատկերների ու վավերագրերի վաճառահանման եւ տարածման համար: Ավելի խիստ պատիժ է նախատեսվում այսպես կոչված «ծանր պոռնկագրության» դեպքերի համար (երեխաների, կենդանիների մասնակցությամբ կամ բռնությամբ ուղեկցվող տեսարաններ):

Նոր օրենսդրությունը զոհունակություն է պատճառում երկրում կառավարող «Համերաշխության ընտրական գործողությանը», ինչպես նաեւ կաթոլիկ եկեղեցուն: Եպիսկոպոսության խոսնակ Ադամ Շուլցը հայտարարեց. «Լեհական օրենսդրությունը մինչեւ օրս եղել է չափազանց ներողամիտ: Փոփոխությունն անհրաժեշտ էր»: Սակայն եկեղեցու բոլոր սպասավորները չէ, որ ոգեւորված են: Օրինակ, Տադեուշ Պերոնեկ եպիսկոպոսը կասկածներ ունի, թե երկրի դատարաններին ծանրաբեռնվածության պատճառով նոր օրենքը դժվար թե իրականում կիրառվի:

Օրենքի ընդունումն արդեն որոշ վեճերի պատճառ է դարձել, քանի որ դա այս կամ այն ձեւով առնչվում է բռնաբարության խնդրին: Ըստ նոր օրենքի, դաժանությամբ ուղեկցվող բռնաբարությունը ոճիր է, մինչդեռ նախկինում դա համարվում էր լոկ հանցանք: Այդ ոճիրն այսուհետեւ կպատժվի 3-15 տարվա բանտարկությամբ: Պատժի խստացման օգտին էվեարկելով՝ պատգամավորներն ինքնաբերաբար էվեարկեցին պոռնկագրության արգելման օգտին, դրանով իսկ կանխելով վիճաբանությունների հետագա ծավալումը:

Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվասնեւսկին նոր օրենքի պատճառով բավական ծանր կացության մեջ է հայտնվել ընտրություններից մի քանի ամիս առաջ: Նախագահի կուսակցությունը՝ նախկին կոմկուսը վիճարկում է պոռնկագրության արգելումը: Բայց եթե նախագահը չվավերացնի օրենքը, նրան կարող են մեղադրել բռնաբարության հարցում թողտվության դրսեւորման մեջ: Բացառապես տարփական ֆիլմեր ցուցադրող «Կանալ+Պոլսկա» հեռուստաալիքի իրավաբանական տնօրեն Պյոտր Կրիչեկը համոզված է, որ նախագահը չի վավերացնի օրենքը: «Պուեն» հանդեսի թղթակցի հետ զրուցելիս նա այն կարծիքը հայտնեց, թե լեհ օրենսդիրներն անկարող են կախարդական փայտիկի մեկ հարվածով վերացնել պոռնկագրությունը: «Դա կլիներ Դեւիդ Կոպերֆիլդին վայել մի ածպարարություն» հայտարարեց նա:

ՀԱՄԱՌՈՏ

Կասպից ծովի իրավական կարգավիճակի որոշումը ձգձգվում է

Դարձյալ հետաձգվել է Կասպից ծովի իրավական կարգավիճակի որոշմանը նվիրված մերձկասպյան հինգ պետությունների փոխարտգործնախարարների հանդիպումը: Այդ մասին մարտի 18-ին հաղորդել են Ադրբեջանի արտգործնախարարության մամլո կենտրոնում: Սա արդեն հինգերորդ հետաձգումն է 1998 թվականին Մոսկվայում կայացած նրանց վերջին հանդիպումից հետո: Ադրբեջանի նավթի պետական ընկերության տեղեկատվության համաձայն, շարունակվում են մերձկասպյան պետությունների փորձագետների աշխատանքային խմբերի հանդիպումները միջազգային փորձագետների մասնակցությամբ: Կողմերի դիրքորոշումներում առկա տարաձայնությունները հիմնականում առնչվում են միջնագծի անցկացման եղանակներին, որի միջոցով հնարավոր է ծովի բաժանումն ազգային հատվածների:

ՍՆԱՐՔ

Օտարերկրյա ավիափոխադրողները հեռանում են Ադրբեջանից

ԲԱԿՈՒ, 18 ՄԱՐՏ, ՍՆԱՐՔ: Արաբական Միացյալ Էմիրություններին պատկանող Մերձավոր Արեւելքի առաջատար «Էմիրեյթս» ընկերությունը հայտարարել է Բաքվում իր ներկայացուցչությունը փակելու եւ Դուբայ-Բաքու-Դուբայ ավիաչվերթները դադարեցնելու մասին, 18-ին հաղորդել են ընկերության Բաքվի ներկայացուցչության մամլո կենտրոնում: Դեռի Բաքու թռիչքները դադարեցնելու մասին որոշում է կայացրել նաեւ հոլանդական KLM ընկերությունը: Բրիտանական «Բրիթիշ էյրուեյզ» ընկերությունն իր պատվերները փոխանցել է «Մեդիթերանիին էյրուեյզ» դուստր ընկերությանը: Պատճառը մեկն է՝ ուղեւորների թվի նվազումը եւ թռիչքների անշահութաբերությունը: Օդային փոխադրողներն արձանագրում են Ադրբեջանում օտարերկրյա ներդնողների տնտեսական ակտիվության անկում, որն ազդում է օդային փոխադրումների պահանջարկի վրա: Գերմանական «Լյուֆտհանզա» ավիաընկերության ներկայացուցիչ Առնե Հոֆմանը դժգոհում է Ադրբեջանում աշխատանքի դժվարությունների առնչությամբ, մասնավորապես Բինա օդանավակայանում սահմանված կարգերից, որտեղ ծառայությունների դիմաց պետք է վճարել կանխիկ գումար: «Դժվար է աշխատել մի երկրում, որտեղ ամեն ինչ կախված է ոչ թե միջազգային նորմերից, այլ՝ մաքր ասիճանավորների քմահաճույքից», հայտարարել է գերմանական ավիաընկերության ներկայացուցիչը:

ԱՄՆ-ում օրական միլիոնատեր է դառնում 60 մարդ

ԵՐԵՎԱՆ, 20 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ըստ ԱՄՆ մամուլի հաղորդումների, երկրում առկա տնտեսական բումի արդյունքում ամեն օր ԱՄՆ-ում 60 մարդ միլիոնատեր է դառնում: «Ազատություն» ռադիոկայանի մեկնաբանը նշում է, որ միաժամանակ աճում են այդ նոր միլիոնատերերի պրոբլեմները: Նրանց հոգեբանության մեջ առաջացել է նեւրոզի նոր տեսակ՝ հանկարծակի հարստության համախտանիշ: Նոր միլիոնատերերը տառապում են մեղավորության ու միայնակության բարդույթով, քանի որ հանկարծակի հարստանալով, անմիջապես կորցնում են իրենց սովորական սոցիալական միջավայրը: Նրանց չեն հարգում շրջապատի մարդիկ, քանի որ ԱՄՆ-ում հարգի է երկարատեւ աշխատանքով հարստանալը, բայց նոր հարուստները հիմնականում նրանք են, ովքեր դրամ են շահել բորսայում կամ վիճակախաղով:

Շվեյցարիան՝ մախանենգության կենտրոն

Իտալիայի ոստիկանությունը մարտի սկզբներին ձերբակալեց ծխախոտի մախանենգությամբ զբաղվող 30 անձանց: Առգրավվեցին 54 տոննա ծխախոտ, 19 բեռնատար, 7 մարդատար մեքենաներ, 3 փչովի մակույկ: Գլանակները բերվել էին Չեռնոգորիայից եւ իրացվում էին Իտալիայում, Իսպանիայում, Մեծ Բրիտանիայում: Մախանենգության լայն ցանցն Իտալիայի հյուսիսում ընկած կոմո քաղաքով հասնում է Շվեյցարիայի հարավային շրջաններ: Իտալացի ճնշիչների կարծիքով, գործողության ղեկավարներն ապահով ապրում են Շվեյցարիայում:

Սա Շվեյցարիայի հետ կապված մախանենգության առաջին դեպքը չէ: Մախանենգության դեմ պայքարի եվրոպական գործակալության տվյալների համաձայն, Շվեյցարիան դարձել է ծխախոտի մախանենգության գլխավոր ճանապարհներից մեկը: Երկրի հարավում՝ Իտալական Շվեյցարիայում գործում են մաֆիական ցանցեր, որոնք ամեն տարի եվրոպան հեղեղում են 25-30 մլրդ մախանենգ գլանակներով: Ինչպես նշում է «Պուեն» հանդեսը, մախանենգության այս վիթխարի ծավալների գոյությունը հնարավոր է դարձել այն պատճառով, որ Շվեյցարիան դա պարզապես քրեական հանցանք չի համարում: Պատահական չէ, որ Շվեյցարիան եվրամիության երկրներին դատական աջակցություն ցույց չի տալիս հարկային մուծումների հետ կապված խարդախությունների բացահայտման ոլորտում:

Վերոհիշյալ գործակալության նոր տնօրեն, գերմանացի Ֆրանց Հերման Բրուներն արդեն ակնարկել է, որ եվրամիությունը երկար չի հանդուրժելու Շվեյցարիայի տարածից սկիզբ առնող կազմակերպված մախանենգությունը, մանավանդ որ դրա հետեւանքով եվրամիության երկրներն ամեն տարի զրկվում են մի քանի միլիարդ եվրոյի հասնող եկամուտներից: Ի դեպ, եվրախորհրդարանի բյուջետային վերահսկողության հանձնաժողովն արդեն որոշել է ճնշական խումբ գործուղել Շվեյցարիա: Վերջինս դժվար թե կարողանա երկար ընդդիմանալ դատական փոխօգնության համաձայնագրի ստորագրմանը, քանի որ իր առեւտրի ամբողջ ծավալի 70 տոկոսն իրականացնում է եվրամիության երկրների հետ:

Պ. Ք.

Նիկոտինի փոքրիկ չափաբաժինն օգտակար է

Սա ոչ մի դեպքում պետք չէ ընդունել որպես ծխելը շարունակելու արդարացում: Խոսքը մաքուր նիկոտինի մասին է եւ ոչ թե զանազան թույների ու խեժի հետ դրա խառնուրդների, որոնք առկա են դասական ծխախոտի մեջ: Նիկոտինը հզոր դեղամիջոց է. դրա այն ֆերմենտները, որոնք ծխամոլություն են առաջացնում, նաեւ թեթեւացնում են ուղեղի որոշակի խանգարումների: Պարկինսոնի եւ Ալցհեյմերի հիվանդությունների ախտանիշները: Մարտի սկզբին Վաշինգտոնում կազմակերպված գիտական համաժողովում նշվեցին մի քանի այլ հիվանդություններ, որոնց դեպքում նիկոտինն օգտակար է: Օրինակ, ուշադրության հիվանդագին բացակայությունը եւ ժամանակակից մարդու ուղեկիցը՝ դեպրեսիան, բուժելու համար: Հարավային Ֆլորիդայի համալսարանի գիտաշխատողներ Փոլ Սանբերգը եւ Արչի Սիլվերն ուսումնասիրել են Թոսեթթի ախտանիշով հիվանդ 70 երիտասարդների: Նրանցից մի քանիսը, որոնք ավանդական հանգստացնող Հալդոլի հետ միաժամանակ բուժվում էին նիկոտինով, ավելի հաջող էին պայքարում հիվանդության դեմ, վերահսկում էին հիվանդության հետ կապված մկանային ցնցումները եւ խոսակցական արատները: Գիտնականները համոզված են, որ նոր բուժամիջոցները, որոնցում հաշվի են առնված նաեւ նիկոտինի լավագույն հատկությունները, կնպաստավորեն ուղեղի խանգարումների բուժման նոր փուլ:

«ՆՅՈՒԶՈՒԻՔ»

ԱԶԳ

Մշակույթ

«Կանչի» դարավերջյան դիմանկարը

Հայաստանի մանկաոչսանեկան «Կանչ» պարբերականը ծնվել է 1925-ին «Պիոներ կանչ» անունով՝ գեղասպանության ողբերգություններից հառնած մեր ժողովրդի ոոմանտիկական հույսերի, նոր կյանքի կառուցման ժամանակաշրջանում, եւ տասնամյակներ շարունակ բարձր պատասխանատվությամբ ու սիրով ծառայել հայրենի հազարավոր մանուկ-պատանիների բարոյական ու հոգեւոր դաստիարակությանը, նրանց մեջ ցանել հայրենիքի հաղթացու եւ տիրոջ ոսկե հունդեր, որոնք շուտով պիտի վերածվեին հաղթ ու հարուստ բերքի: Մեր տասնամյա խաղաղ հեղափոխության, որը շուտով արյունալի ու կոդոմատիչ էր դառնալու, առաջին իսկ գաղափարագար գաղափարախոսները, ի թիվս շատ ու տարբեր երեւույթների կործանման, հանդեցին անչափահասների աչքերը, միտքն ու զգացմունքները մեծ-անպարագիծ աշխարհի հանդեպ նրանց հոգում առաջացնելով հետաքրքրության ալիքներ, նորն ու անհայտը ճանաչելու ծգտում: Պարբերականի այս տենդենցը վերջին տարիներին զգալի է ավելի, քան երբեւիցե: Խմբագրությունը դա բարձրացրել է հասարակական, գիտամշակութային հաղթականության աստիճանի եւ իրականացնում է լրատվական լավագույն միջոցներով ու բազմաժանրությամբ:

Այսօր մեր հոգեւոր, մշավորական դաշտից չկա մեկը, որ հանդես եկած չլինի «Կանչի» էջերում հոդվածով, հարցազրույցով, մենախոսությամբ ու երկխոսությամբ, կարծիքով, վերլուծականով եւ այլն: Թերթում մշտապես ներկա է մեր մշակույթը թատրոն, կերպարվեստ, երաժշտություն, ինչպես նաեւ դպրոց, գիտություն, սպորտ: Ինչո՞ւ եւ ինչպե՞ս չնշել, որ մեր գերքաղաքականացված մթնոլորտում «Կանչի» այս մշտնջենությունն արժանի է բարձր գնահատության, նա հաճախ անում է նաեւ ուրիշների պարտականությունը՝ լրացնելով այն դատարկ վանդակները, որոնք, ցավոք սրտի, այսօր այնքան շատ են, արձագանքում, խոսք ասում նվիրված բնագավառների մասին եւ փորձում խոսել իսկական արժեքների գիտակցությամբ ու բարձր չափանիշներով:

1996 թ.-ից ի վեր թերթի յուրաքանչյուր համարում ներկա է հայկական վերստառությամբ նոր բաժին՝ «Դարավերջի դիմանկար»: Իրենց խոհերով ու մտորումներով արդեն հանդես են եկել շուրջ 170 արվեստագետներ, գիտնականներ, հասարակական-քաղաքական գործիչներ, գրողներ, եկեղեցու անվանի սպասավորներ, որոնց դարավերջյան տեսլադրումները շատ դեպքերում հետաքրքիր են արժանի համընդհանուր ուշադրության: Այդ ամենը «Կանչը» վերջերս լույս ընծայեց շքեղ հատորով՝ մշավորականների մեծաղիր լուսանկարներով, խոսք առ խոսք, միաձեւ, լուսարձակի տակ ցուցադրելով իր դարավերջյան յուրահատուկ պատկերասրահը: Չի կարելի ասել, թե այստեղ «ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել», անխտիր բոլորն են արժանի խոսելու իրենց ու ավարտված դարի ա-

«վերակառուցեցին» նաեւ թերթի կնունքի անունը՝ հանդուրժելով միայն «Կանչ» բառը, կարծելով, որ «պիոները» կից է «կոմունիստականին», նրա ծուսը եւ ոչ թե «առաջին անգամ նոր չհետաքրքրված բնագավառ ոչ ոք դնող եւ նոր ուղիներ բացող մարդ, ռահվիրա»: (Ռաֆֆին տող ունի. «Հայերը նրա պիոները դարձան ամեն տեսակ գործողության մեջ», լավ է գաղափարագարներից ոչ ոք չիմացավ այս տողի տեղը): Բարեբախտաբար, պարբերականի անունը թեեւ կրճատվեց, սակայն էությունը մնաց անփոփոխ, մինչեւ իսկ այս դժվարին տարիներին առավել հարստացավ նոր թեմաներով, հարց ու պատասխաններով շնորհիվ նրա գլխավոր խմբագիր Հմայակ Պետրոսյանի, որ մեր լավագույն մշավորականներից է, ստեղծագործող խմբագրատեսչ, թերթի սահմանագծված տարածքում իսկապես նոր ուղիներ բացող անհատականություն եւ իր սակավաթիվ աշխատակիցների:

Ժամանակի տարբեր շրջափուլերում «Կանչին», ավելի կամ պակաս չափով, բնորոշ է եղել «սահմանախախտումը» զտարյուն մանկապատանեկան հետաքրքրություններից դեպի հասուն կյանք, գիտություն, մշակույթ, գրականություն: Այս միտումը թերթում հիմնավորեցին Վարդգես Քալանթարյանը, Դարիք Հայրապետյանը եւ հատկապես Վարդգես Պետրոսյանը, որոնք բացեցին անչափահասների աչքերը, միտքն ու զգացմունքները մեծ-անպարագիծ աշխարհի հանդեպ նրանց հոգում առաջացնելով հետաքրքրության ալիքներ, նորն ու անհայտը ճանաչելու ծգտում: Պարբերականի այս տենդենցը վերջին տարիներին զգալի է ավելի, քան երբեւիցե: Խմբագրությունը դա բարձրացրել է հասարակական, գիտամշակութային հաղթականության աստիճանի եւ իրականացնում է լրատվական լավագույն միջոցներով ու բազմաժանրությամբ:

Այսօր մեր հոգեւոր, մշավորական դաշտից չկա մեկը, որ հանդես եկած չլինի «Կանչի» էջերում հոդվածով, հարցազրույցով, մենախոսությամբ ու երկխոսությամբ, կարծիքով, վերլուծականով եւ այլն: Թերթում մշտապես ներկա է մեր մշակույթը թատրոն, կերպարվեստ, երաժշտություն, ինչպես նաեւ դպրոց, գիտություն, սպորտ: Ինչո՞ւ եւ ինչպե՞ս չնշել, որ մեր գերքաղաքականացված մթնոլորտում «Կանչի» այս մշտնջենությունն արժանի է բարձր գնահատության, նա հաճախ անում է նաեւ ուրիշների պարտականությունը՝ լրացնելով այն դատարկ վանդակները, որոնք, ցավոք սրտի, այսօր այնքան շատ են, արձագանքում, խոսք ասում նվիրված բնագավառների մասին եւ փորձում խոսել իսկական արժեքների գիտակցությամբ ու բարձր չափանիշներով:

1996 թ.-ից ի վեր թերթի յուրաքանչյուր համարում ներկա է հայկական վերստառությամբ նոր բաժին՝ «Դարավերջի դիմանկար»: Իրենց խոհերով ու մտորումներով արդեն հանդես են եկել շուրջ 170 արվեստագետներ, գիտնականներ, հասարակական-քաղաքական գործիչներ, գրողներ, եկեղեցու անվանի սպասավորներ, որոնց դարավերջյան տեսլադրումները շատ դեպքերում հետաքրքիր են արժանի համընդհանուր ուշադրության: Այդ ամենը «Կանչը» վերջերս լույս ընծայեց շքեղ հատորով՝ մշավորականների մեծաղիր լուսանկարներով, խոսք առ խոսք, միաձեւ, լուսարձակի տակ ցուցադրելով իր դարավերջյան յուրահատուկ պատկերասրահը: Չի կարելի ասել, թե այստեղ «ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել», անխտիր բոլորն են արժանի խոսելու իրենց ու ավարտված դարի ա-

նունից եւ նայելու առաջ՝ մեր գալիք օրվան, սակայն գիրքն ամբողջության մեջ, իր մասնակիցների ճնշող մեծամասնությամբ արտահայտում է հայոց դարավերջյան տագնապները, մտորումները, գաղափարներն ու ծգտումները: Ասեմ, որ թերթն իր էջերում շարունակում է հարստացնել այս պատկերասրահը նոր «ցուցադրանքներով», որոնք մեկ-երկու տարուց կարող են նոր հատոր դառնալ:

«Դարավերջի դիմանկար» գրքին հատուկ են մի քանի արժեքային նշաններ, որոնցից կարեւոր եմ համարում առանձնացնել նրա յուրահատուկ հանրագիտարանային բնույթը այս վերջին տարիների առնչությամբ, մեր հուզաշխարհի գրեթե անսխալ «փաստագրությունը» ներքին-արտաքին ընդգծումներով, որոնք ի մի են բերում ժամանակի դեմքը բավականին ընդարձակ շրջանակում: Հատորն ունի զգալի ճանաչողական արժեք: Եվ, գուցե, ամենակարեւորը՝ այն ցույց է տալիս հայոց մշավորականության կենդանի ներկայությունը, այսօր էլ նրա անփոխարինելի դերը ժողովրդի ճակատագրում, նրա խոսքի ծանրակշռությունը, որոնք ներկայումս երբեմն ու բարձրաձայն ենթարկվում են ցավալի-տխուր ժխտումների:

«Դարավերջի դիմանկարը» մեր հոգեւոր-մշավոր-դաշտի հաստատումներից է:

ՆՈՐԱՅՐ ԱՂԱԼՅԱՆ

Հետաքրքրական ուսումնասիրություն «Կանոնական սահմանադրության» մասին

Օրերս «Տիգրան Մեծ» հրատարակչությունում լույս է տեսել 1999 թ. նշումը կրող մի գրքույկ՝ «1500-ամյա հայկական Սահմանադրությունը. ընդունման հանգամանքները եւ նշանակությունը» վերնագրով: Հեղինակներն են պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս, «Սոավի դողանջներ» թերթի գլխավոր խմբագիր կիր Ղահրամանյանը եւ ՀՀ Սահմանադրական դատարանի փոխնախագահ Վլադիմիր Հովհաննիսյանը: Սեդրուի Ասլանյանի հովանավորությամբ լույս տեսած այս գրքույկը հրատարակության է երաշխավորել Երեւանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնը, որի աշխատակիցներից Պետրոս Հովհաննիսյանն էլ գրքույկի խմբագիրն է:

Գրքույկը բաղկացած է չորս մասերից: Առաջին մասում հեղինակները ներկայացնում են 5-րդ դարի վերջին կամ 6-րդ դարի սկզբին Աղվանքի Վաչագան Բարեպաշտ հայ Առանձահիկ արքայի ամառանոց Աղվենում գումարված աշխարհաժողովի ու վերջինիս ընդունած «Կանոնական Սահմանադրության» հիմնական մտքերը, գնահատում այս փաստաթղթի պատմական-իրավագիտական նշանակությունը: Ըստ հեղինակների, սա մարդկության պատմության մեջ առաջին փաստաթուղթն է, ուր օգտագործվել է «Սահմանադրություն» արտահայտությունը: «Կանոնական Սահմանադրությունը», իր 22 հոդվածներով, կոչված էր աղահովելու հասարակական համերաշխությունը եւ «նրա ծեռնարկումը ոչ թե տեղական, այլ համահայկական երեւույթ էր»: Հեղինակները ցավ են հայտնում, որ «1500 տարի առաջ ընդունված... իրավագիտական այս եզակի փաստաթուղթը մինչ օրս իրավագիտական արժանի ճնշության ու գնահատականի չի արժանացել»: Ըստ ուսումնասիրության հեղինակների՝ հիմնականում եկեղեցականներին ու եկեղեցականներ-աշխարհականներ փոխհարաբերություններին վերաբերող այս Սահմանադրության հոդվածները պետք է ավելի լայն իմաստով ընկալել, քանի որ «պետության մեջ դատական գործառույթը կատարում էր եկեղեցին: Ըստ էության, վերջինս պետության մաս էր կազմում, եւ «եկեղեցական» բառը չպետք է հասկանալ ներկա ըմբռնմամբ»: Հեղինակները եզրակացնում են, որ «Աղվենի Սահմանադրությունը կարեւոր դեր է կատարել հայ իրավագիտական մտքի հետագա զարգացման եւ հայոց արեւելից աշխարհում պետականության ամրապնդման գործում»:

Մեր կարծիքով, ուսումնասիրվող թեմայի հետ առնչություն չունի գրքույկի երկրորդ մասը, ուր շարադրվում է Ուտիք-Արցախի մասնավորաբար 18-20-րդ դարերի համառոտ պատմությունը: Տարակուսելի են գտնում հեղինակների այն կարծիքը, որ ԼՂԻՄ-ի հայկական իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ի ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանության մեջ նրանք նշմարում են «մեկուկես հազարամյակ առաջ ընդունված Սահմանադրությամբ արմատավորված սոցիալական արդարության սկզբունքները»:

Գրքույկի ավարտին բերված են «Կանոնական Սահմանադրության» 1288 թ.-ին ընդօրինակված ու Մատենադարանում պահվող հ. 1531 ձեռագրի պատճենը եւ գրաբարից արեւելահայերեն վերածումը, ինչպես նաեւ աղբյուրագիտական ծանոթագրությունները:

Կ. Ղահրամանյանի եւ Վլ. Հովհաննիսյանի այս ուսումնասիրությունն արժանի է տեղ գտնելու հայ իրավագիտական մտքի պատմության դասագրքերում:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՔԱՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

Օսկար-2000

Այս տարի կինոարվեստի ամերիկյան ակադեմիան օսկարների ամենամյա մրցանակաբաշխությունը կկազմակերպի 72-րդ անգամ. մարտի 26-ին: Այն կսկսվի երեկոյան 5-ին եւ կհեռարձակվի ABC հեռուստաընկերության կողմից: Օսկար 2000-ի թեկնածուները 23 անվանակարգերում արդեն հայտնի են:

1. Ամերիկյան գեղեցկություն (American Beauty)

Ռեժիսոր՝ Սեմ Մենդես

Դերերում՝ Քեվին Սփեյսի, Անեթ Բենինգ, Թորա Բիրչ, Փիթր Գալահեր

Պրոդյուսեր՝ Սթիվն Սոդերբերգ

Թեկնածության կարգերը (թվով՝ 8)՝ լավագույն ֆիլմ, դերասան գլխավոր դերում (Քեվին Սփեյսի), դերասանուհի գլխավոր դերում (Անեթ Բենինգ), ռեժիսոր, օպերատոր, սցենար, մոնտաժ, երաժշտություն:

Սյուժեն. Գոտեսկային ոճով նկարահանված այս կատակերգությունն ունի տարօրինակ կերպով խորը, դրամատիկ կերպարներ: Ֆիլմը խճճված, ոչ սովորական սիրային պատմությունների շղթա է. ընտանիքի հայրը սիրահարվում է դստեր ընկերուհուն, մայրը մեկ այլ սիրեկան է գտնում, աղջիկը սիրում է հարեւանի որդուն եւ այլն...

Լրացուցիչ փաստեր. Ֆիլմն արդեն շահել է 3 Ոսկե Գլոբուս մրցանակ՝ լավագույն դրամատիկ ֆիլմ, ռեժիսոր եւ սցենար կարգերում: Սա բատերական ռեժիսոր Սեմ Մենդեսի դեբյուտն է կինոյում: Անգլիական «Բյու» ամսագրի գնահատականը 5 աստղ է, որն առավելագույնն է եւ տրվում է բացառիկ դեպքերում:

2. Վեցերորդ զգայարանը (The Sixth Sense)

Ռեժիսոր՝ Մ. Նայթ Շալաման (29-ամյա հնդիկ)

Դերերում՝ Բրյուս Ուիլիս, Հեյլի Ջոել Օսմենք, Թոնի Կոլետ:

Թեկնածության կարգերը՝ (թվով՝ 6) լավագույն ֆիլմ, դերասան երկրորդական դերում (Հեյլի Ջոել Օսմենք, փոքրիկ տղայի՝ Քոուլի դերով), դերասանուհի երկրորդական դերում (Թոնի Կոլետ), ռեժիսոր, սցենար, մոնտաժ:

Սյուժեն. Հոգեբույժը, որի կերպարը էկրանին ստեղծել է Բրյուս Ուիլիսը, հանդիպում է խելացի մի տղայի, որը մահացած մարդկանց ձայներ լսելու ընդունակություն ունի: Այդ ձայները սկզբում վախեցնում են փոքրիկին, ապա սկսում նրանից օգնություն խնդրել: Այն, ինչ պարզվում է վերջում չափազանց անսպասելի է:

Պատրաստեց
ԱՐԹՈՒՐ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

Դեյլ Կարնեգի. խորհուրդներ կանանց

Ինչպես գտնել երջանկություն եւ հանգիստ

Կանոն 1. Ձեր գլուխը լցրեք խաղաղության, համարձակության, առողջության, հույսի մասին մտքերով, քանի որ «մեր կյանքն այնպիսին է, ինչպիսին ստեղծում են մեր մտքերը»:

Կանոն 2. Մի փորձեք հաշիվ մաքրել ձեր թշնամիներից, հակառակ դեպքում ինքներդ կտուժեք ավելի շատ, քան կկարողանաք ցավ պատճառել նրանց: Եկեք հետեւենք Այզենհաուերին. «Ոչ մի րոպե չմտածեք նրանց մասին, ում չեք սիրում»:

Կանոն 3. ա) Փոխանակ նեղվելու ինչ-որ մեկի անընդհատակալ վերաբերմունքից, լավ է, որ դա օրինաչափ համարեք: Հիշեք Հիսուսին, որ բուժեց 10 բորոտների եւ միայն մեկը շնորհակալ եղավ: Ինչո՞ւ մենք պիտի ավելին ակնկալենք:

բ) Եկեք հիշենք, որ երջանկության հասնելու միակ ուղին ոչ թե շնորհակալություն սպասելն, այլ նվիրելն, բարի գործ անելու մեջ է:

գ) Երախտապարտ լինելու զգացումը դաստիարակում է, եթե ուզում ենք, որ մեր երեխաներն ունենան այդ հատկությունը, հարկավոր է ներշնչել նրանց:

Կանոն 4. Հաշվեք երանելի պահերը, ոչ թե դժբախտությունները:

Կանոն 5. Մի նմանակեք ուրիշներին: Եղեք ինչ-որ կամ, «նախանձն անկրթություն է», իսկ «նմանակումը՝ ինքնասպանություն»:

Կանոն 6. Եթե բախտը ձեզ մի ծաղիկ տա, ծաղկեփունջ դարձրեք:

Կանոն 7. Ձեր ցավոտ տեղերը մոռանալու համար փորձեք ուրիշներին մի փոքր ուրախացնել: Երբ ուրիշներին բարի եք անում, առաջին հերթին ձեզ եք բարի բերում:

Պատրաստեց Մ. ԲԱԴԱԼՅԱՆԸ

ՕՐՎԱ ԹԵՄԱ

Մարտի 21

- 1685 թ. ծնվել է գերմանացի կոմպոզիտոր, երգեհոնահար Յոհան Սեբաստիան Բախը: Երաժշտության մեջ նրա փիլիսոփայական հայացքները մարդկային մտքի գագաթներից են եւ ամփոփում են պոլիֆոնիզմի անցած ու շարունակվող բոլոր միտումները:
- 1839 թ. ծնվել է ռուս կոմպոզիտոր Մոդեստ Մուսորգսկին, որը երաժշտական «Հզոր խմբի» անդամ էր:
- 1879 թ. ծնվել է Հասմիկը (Թագուհի Հակոբյան), որը պետական թատրոնի (այժմ՝ Սունդուկյանի անվան) դերասանուհիներից էր եւ մինչեւ կյանքի վերջը հավատարիմ մնաց թատերարվեստի գործին: Հասմիկը մարմնավորել է շուրջ 3 տասնյակից ավելի կերպարներ, խաղացել է տարբեր դերեր:
- 1889 թ. ծնվել է խորհրդային դերասան, բանաստեղծ եւ կոմպոզիտոր Ալեքսանդր Վեսինսկին, որի բեմելը սկսվեց 1915-ին:
- 1895 թ. ծնվել է ռուս դերասան Լեոնիդ Ուսյոսովը:
- 1920 թ. ծնվել է խորհրդային երգիչ Գեորգ Օսը:
- 1660 թ. ծնվել է անգլիացի գրող, հրապարակախոս Դանիել Դեֆոն:
- Այս օրը հին հայկական տոմարով Արեգ ամսվա Գրգուռ օրն է:

ՆԱՐԳԻԶ ԹԱՐԵՎԱՍՅԱՆԸ

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Ուժերն անհավասար էին

Հանգստյան օրերին տրվեց Հայաստանի «Անկախություն» գավաթի հերթական 9-րդ խաղարկության մեկնարկը: Կայացան 1/8 եզրափակիչի առաջին հանդիպումները, որոնցում առաջին խմբի թիմերը պետք է յուրօրինակ ֆինություն հանձնեին: Սակայն դեռևս մեկնարկի շեմին մասնակիցների թիվը երկուսով նվազեց: Այդպես էլ չկարողանալով ֆինանսական միջոցներ հայթայթել, լուծարվեց հանրապետության հնագույն ֆուտբոլային կոլեկտիվներից մեկը՝ «Նաիրին»: Փաստն, իրոք, ցավալի է, սակայն վերջին տարիներին սա կարծես օրինաչափ գործընթաց է դարձել:

Գավաթի խաղարկությունից հրաժարվեց նաեւ «Լոռին»: Այսպիսով, «Լեռնագործն» ու «Կիլիկիան» առանց պայքարի մնան հաջորդ փուլ: Քառորդ եզրափակիչի ուղեգիրը գործնականում ապահովեցին նաեւ «Զվարթնոցը» եւ «Արմա» անվանումով հանդես եկող Արարատի «Ցեմենտը», որոնք մրցակիցների նկատմամբ հասան բացահայտ առավելության:

«Զվարթնոցի» ֆուտբոլիստները 10-1 հաշվով հաղթեցին Արտաշատի «Դվինին»: Վերջինս փոխարինել է մինչեւ այդ գավաթի խաղարկությունում հայտավորված «Ցեմենտ-2»-ին եւ այդ թիմի փոխարեն հանդես կգա առաջին խմբում:

«Արմատը» սեփական հարկի տակ 8 անպատասխան գոլակ խփեց «Կոտայքի» դարպասը: Արարատցիներից 3 գոլի հեղինակ դարձավ Արմեն Սարգսյանը, իսկ ահա նախորդ առաջնության լավագույն ռմբարկու Շիրակ Սահակյանին չհաջողվեց իր հաշվին գոլ գրանցել:

«Արարատ»-«Արմենիկում» հանդիպումն անցավ արարատցիների նկատելի առավելությամբ: Առաջին խաղակեսում խաղի տեմպը բավականին դանդաղ էր: «Արարատի» ֆուտբոլիստների առանձնակի ծգտումը չէր զգացվում, երեւում է՝ նրանք վստահ էին, թե վաղ թե ուշ հասնելու են հաջողության: Առաջին վտանգավոր պահը ստեղծվեց 13-րդ րոպեին, երբ հարվածային դիրքում հայտնվեց Գեորգի Անդրեասյանը, սակայն հաջող խաղաց Վահան Շմավոնյանը՝ ետ մղելով գնդակը: 36-րդ րոպեին էմիլ Մեսրոպյանին վայր գցելու համար նշանակվեց 11 մ հարված, որը սակայն չկարողացավ իրացնել Կարեն Բարսեղյանը: Հանգստից հետո «Արարատը» բավականին ակտիվացրեց հարձակողական գործողությունները եւ մեկ անգամ եւս 11 մ հարվածի իրավունք ստացավ: Այս անգամ Համլետ Մխիթարյանի հարվածն անկասելի էր: 74-րդ րոպեին Ալիկ Թադեւոսյանը՝ գլխի հարվածով ամրագնդեց թիմի հաղթանակը 2-0:

«Շիրակը» խփած միակ գոլի շնորհիվ հաղթեց «Դինամո-2»-ին: «Դինամոն» եւս նվազագույն առավելության հասավ ՖԻՄԱ-ի նկատմամբ (1-0): Առաջին խմբի թիմերից միայն «Ղարաբաղին» հաջողվեց խույս տալ պարտությունից: Սեփական խաղադաշտում «Միկայի» հետ հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի (1-1):

1/8 եզրափակիչի պատասխան հանդիպումները տեղի կունենան մարտի 29-ին եւ 30-ին:

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Եվրագավաթների համար

Այսօր սկսվում է ֆուտբոլի եվրագավաթների հերթական եռօրյան:

Այսօր ու վաղը Չեմպիոնների լիգայի երկրորդ խմբային փուլի մասնակիցները կանցկացնեն վերջին 6-րդ տուրի հանդիպումները, իսկ հինգշաբթի օրը ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչում կանցկացվեն պատասխան խաղերը:

Չեմպիոնների լիգայում այսօր տեղի կունենան հետեւյալ հանդիպումները. «A» խումբ՝ «Սպարտա» (Չեխիա)-«Բարսելոն» (Իսպանիա), «Հերտա» (Գերմանիա)-«Պորտո» (Պորտուգալիա), «B» խումբ՝ «Վալենսիա» (Իսպանիա)-«Մանչեսթր յունայթեդ» (Անգլիա), «Ֆիորենտինա» (Իտալիա)-«Բորդո» (Ֆրանսիա): Վաղը կմրցեն մյուս երկու խմբերի թիմերը: Խաղադաշտ կմտնեն «C» խմբից՝ «Դինամո» (Ուկրաինա)-«Բավարիա» (Գերմանիա), «Ռոսենբորգ» (Նորվեգիա)-«Ռեալ» (Իսպանիա), «D» խմբից՝ «Չելսի» (Անգլիա)-«Լացիո» (Իտալիա), «Օլիմպիկ» (Ֆրանսիա)-«Ֆեյենոորդ» (Հոլանդիա) զույգերը:

Չեմպիոնների լիգայի հաջորդ՝ քառորդ եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք արդեն իսկ նվաճել են չորս թիմեր՝ «Բարսելոնը», «Մանչեսթր յունայթեդը», «Բավարիան» եւ «Չելսին»: Մյուս չորս ուղեգրերի տերերը հայտնի կդառնան վերջին խաղերից հետո: Հաջորդ փուլ մտնելու հույսեր պահպանում են ութ թիմեր (այդպիսի հույսերից զրկվել են խմբերի վերջադահիճներ՝ «Հերտան», «Բորդոն», «Ռոսենբորգը» եւ «Օլիմպիկը»):

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում կհանդիպեն «Վերդեր» (Գերմանիա)-«Արսենալ» (Անգլիա), «Լանս» (Ֆրանսիա)-«Սելտա» (Իսպանիա), «Գալաթասարայ» (Թուրքիա)-«Սպարտակ» (Իսպանիա), «Սլավիա» (Չեխիա)-«Լիդս» (Անգլիա) զույգերը: Երկու խաղի արդյունքով կիսաեզրափակիչ մտնելու մեծ հնարավորություններ ունեն «Լիդսը», «Գալաթասարայը» եւ «Արսենալը», իսկ մյուս զույգի հաղթողի հարցը շատ անորոշ է:

ՌՈՒԲԻՆ-ԱՐՄԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԿԱՊԵՐ

Կարեւոր խորհրդակցություն

Մոսկվայում կայացավ խորհրդակցություն, որին մասնակցեցին ԱՊՀ երկրների սպորտի ղեկավարները (բացառությամբ Ուզբեկստանի եւ Տաջիկստանի ներկայացուցիչների): Հայաստանից այս չափազանց կարեւոր միջոցառմանը մասնակցեց ՀՀ սպորտվարչության պետ Արմեն Գրիգորյանը:

Համաժողովի բոլոր մասնակիցները, ելույթ ունեցողները միահամուռ նշեցին, որ նախկինում գործող մարզական կառույցը պետք է վերականգնել: Առաջարկվեց ժողովուրդների սպարտակիադաները, որոնք նախկինում մեծ հեղինակություն էին վայելում, կրկին չորս տարին մեկ անցկացնել: Ցանկություն հայտնվեց, որ տարբեր մարզաձեւերից ԱՊՀ առաջնություններ անցկացվեն:

Մոսկովյան խորհրդակցության ժամանակ որոշվեց, որ տարբեր հարցեր քննարկելու, կոնկրետացնելու համար 2001 թվականին Դրիմում կհանդիպեն սպորտի նախարարները: Եկող տարի նմանօրինակ հանդիպում Ղազախստանում կանցկացնեն նաեւ փոխնախարարները: Նրանք կկազմեն 2002 թ. մարզական միջոցառումների օրացույցը՝ ԱՊՀ երկրների մրցումները համաձայնեցնելով ափարհի ու եվրոպայի առաջնություններին:

Տարբեր երկրների մարզական ղեկավարները գործընկերներին պատմեցին Սիդնեյի օլիմպիական խաղերի նախապատրաստական աշխատանքների մասին: Այս առումով առանձնացավ Ռուսաստանի ներկայացուցիչ Ալեքսանդր Պարխոմենկոյի ելույթը: Նա տեղեկացրեց, որ մարզական կարեւորագույն միջոցառմանը լավագույնս նախապատրաստվելու նպատակով Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Բելառուսի մարզիկները օլիմպիադային նախորդող ժամանակամիջոցում համատեղ պարապմունքներ կանցկացնեն: Իսկ խաղերից մեկ ամիս առաջ երեք երկրների օլիմպիականները անմիջականորեն կնախապատրաստվեն Վլադիվոստոկ քաղաքում: Ի դեպ, չի բացառվում Մոսկվայով Սիդնեյ մեկնող Հայաստանի օլիմպիական թիմի «միջանկյալ վայրէջքը» հեռավորարեւելյան այս քաղաքում: Հնարավորության դեպքում մեր մարզիկները եւս նախապատրաստության վերջին փուլը կանցկացնեն Վլադիվոստոկում:

Բոլոր ելույթ ունեցողները մեծ ուշադրություն հատկացրին մանկապատանեկան սպորտին: Արմեն Գրիգորյանն իր խոսքում նշեց, որ հայկական սպորտի զարգացման ծրագրում այդ հարցերն արդեն իսկ անհրաժեշտ տեղ են գտել:

Խորհրդակցության երկրորդ օրը մասնակիցները եղան մերձմոսկովյան Պոդոլսկ քաղաքում, որտեղ շահագործման հանձնվեց սառցադաշտը (ի դեպ, ինչպես նշեց պրն Գրիգորյանը, այն բավականին նման է երեւանի մարզահամերգային համալիրին): Այն շատ գեղեցիկ է եւ լավագույններից մեկն է Եվրոպայում:

Բոլորն անխտիր հետաքրքրվում էին մեր ծաղկաձորով: Շատերը կարոտով էին հիշում այնտեղ անցկացրած ուսումնամարզական հավաքները՝ նշելով, թե խնի-խանիսի՝ խոշոր հաջողություններ տանող ուղին սկզբնավորվել է հենց ծաղկաձորից: Բոլորը ցանկանում էին, որ բարձրալեռնային մարզահանգրվանը կրկին կատարի բարձրակարգ մարզիկների դաստիարակության եւ մարդկանց մերձեցնելու նախկինում ունեցած դերը:

ԹԵՆԻՍ

Դեւենպորտի 28-րդ տիտղոսը

Ամերիկյան Կալիֆորնիայի Ինդիան Ուելս քաղաքում ավարտվեցին կանանց ու տղամարդկանց խոշոր մրցաշարերը: Երկուսն էլ շատ ներկայացուցչական էին. մրցումներում հանդես էին գալիս ափարհի համարյա բոլոր ուժեղագույն թենիսիստները:

Կանանց մրցաշարի եզրափակիչում, ինչպես եւ սպասվում էր, հանդիպեցին ափարհի առաջին եւ երկրորդ թենիսիստուհիներ Մարտինա Հինգիսը (Շվեյցարիա) եւ Լինդսեյ Դեւենպորտը (ԱՄՆ): Այս երկու մարզուհիների նախորդ չորս հանդիպումներն էլ ավարտվել էին ամերիկուհու հաղթանակով: Այս անգամ էլ Դեւենպորտը գերազանցեց մրցակցուհուն՝ հաղթելով 4-6, 6-4, 6-0 հաշվով: Այժմ այս թենիսիստուհիների անձնական հանդիպումների հաշիվը 11-7 է՝ հօգուտ Դեւենպորտի: Ինչպես երեւում է, նա Հինգիսի համար շատ դժվար մրցակից է դարձել: Մինչեւ Ինդիան Ուելսը թե՛ Լինդսեյը, թե՛ Մարտինան WTA մրցաշարերում հավասար՝ 27-ական հաղթանակ էին տարել: Բայց այժմ Դեւենպորտն առաջ անցավ գլխավոր մրցակցուհուց՝ շահելով իր մարզական կարիերայի 28-րդ տիտղոսը:

Տղամարդկանց մրցաշարը հարուստ էր անակնկալներով: Պայքարից դուրս մնացին Անդրե Աղասին, Փիթ Սամփրասը (ԱՄՆ), Եվգենի Կաֆելնիկովը (Ռուսաստան), այլ ուժեղագույններ: Իսկ վճռական խաղում գլխավոր մրցանակը վիճարկեցին Ալեխս Կորետխան (Իսպանիա) եւ Թոմաս Էնկվիստը (Շվեդիա): Կորետխան, որը վերջին մեկ տարվա ընթացքում մի տեսակ սկսվերում էր գտնվում, հիանալի հանդես եկավ: Նա մրցակցին պարտության մատնեց 6-4, 6-4, 6-3 հաշվով եւ հեղինակավոր մրցաշարի հաղթող դարձավ:

ՌՈՒԲԻՆ-ԱՐՄԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱԶՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված մրցանակային խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Վան: 2. Լոս: 3. Ռուր: 4. Բավարիա: 5. Յուկատան: 6. Վար: 8. Լոս: 9. Նավ: 11. Եղինջ: 12. Տեսակ: 14. Ակներ: 15. Որիին: 18. Սին: 20. Նոյ: 22. Ծովահեն: 25. Ֆորտունա: 27. Դասակ: 29. Եղիսե: 30. Տալ: 31. Համ: 32. Առու: 36. Գելեր: 37. Ռահիմ: 38. Իոն: 39. Անանյան: 40. Սաղաթել: 41. Ներ: 42. Ագնոն: 43. Սուրմա: 50. Կոխ: 51. Ակր: 52. Կամ: 54. Մով: 55. Յար: 56. Նախ:

Հորիզոնական

1. Վալս: 3. Ռուբլով: 7. Ալան: 10. Նեստերով: 13. Կուրյատով: 16. Արա: 17. Սուսեր: 19. Տանին: 21. Ընծա: 23. Իրա: 24. Եֆիմ: 26. «Ջոկոնդա»: 28 Նեյտրոն: 33. Ադան: 34. Ոսանիկ: 35. «Իտառ»: 36. «Գեռնիկա»: 40. Սեն Սանս: 44. Լենա: 45. Նրա: 46. Գաուս: 47. Հոնիա: 48. Դուրան: 49. Նեւա: 50. Կրամսկոյ: 53. Թամպնյան: 57. Խորխ: 58. Մանիլով: 59. Տրեխ:



Ուղղահայաց

1. 1992 թ. ամառային օլիմպիական խաղերի մայրաքաղաքը: 2. Շոտլանդացի մաթեմատիկոս: 3. Հայկ նահապետի որդին: 4. Ամուսնական արարողություն, հանդես: 6. Այն, ինչին ձգտում են հասնել: 7. Քաղաք ՀՀ-ում: 10. Հողի վերին շերտի ցած սահելը, հոսքը: 11. Հայ տաղանդավոր դիրիժոր: 12. Հանձնառած պարտականությունը կատարելու համար որոշես գրավական պահված կամ թողնված անձ: 16. «Դավիթ-Բեկ» օպերայի հեղինակը: 17. Ազգային պարկ Հնդկաստանում, Ասամ նահանգում: 19. Թուրքական կարճ, կեռ թուր: 20. Սասանաների առաջնորդը, գլխավորը: 25. Տպարանի ափսատոպի հին մասնագիտություն: 26. Երկարության հին չափ, որը հավասար է մեկ արշինի: 27. Հայ գրող, «Պայքար» վեպի հեղինակը: 29. Ճապոնիայի պրեմիեր-մինիստրը 1987 թ-ից: 31. Ռուս կինոդերասան («Սիմինո», «Անորսալիները»): 32. Հայ վաղամեռիկ բանաստեղծ: 33. Իտալացի գեղանկարիչ, ճարտարապետ (1511-74 թթ.): 37. Իտալացի ճանապարհորդ Պոլոյի անունը: 38. Տարվա եղանակ:

Հորիզոնական

5. Համաստեղություն երկնքի հարավային կիսագնդում: 7. Նոր կտակարանի այն մասը, որը պատմում է Քրիստոսի կյանքի եւ ուսմունքի մասին: 8. Խոշոր կաթնասուն կենդանի: 9. Չայնավորի կամ վանկի արտաբերման տեւողությունը: 13. Սվարաթղթից պատրաստված մայան, որտեղ գեղեցիկ են լուսանկարներ: 14. Հայ ժամանակակից երգահան: 15. Հեթանոսական տաճար Հայաստանում: 18. Արվեստագետ: 21. Որեւէ հեղուկի տակը նստած քանձր զանգված, նստվածք: 22. Պատժի տեսակ: 23. «Հայրիկ», «Եռանկյունի» կինոնկարների ռեժիսորը: 24. Կույբիշեւ քաղաքի այժմյան անվանումը: 28. Անընդհատ վառվող: 29. Հոլով: 30. Մակկվող հող՝ հարակից հարմարություններով: 34. Անգույն հեղուկ: 35. Հայ դրամատուրգ: 36. Թանկագին քար: 39. Հայ օպերային երգիչ: 40. Պաշտոնական կարգադրություն: 41. Որեւէ բանի դիմաց տրված փաստաթուղթ: 42. Ռուս ընտիր, ափսարհի չեմպիոն:

Կազմեց Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

Մրցանակային հաջող խաչբառը, կտրոնագրվի «Ազգի» մարտի 25-ի համարում:
Փորձեք լուծել, եւ մարտեմավոր մրցանակը ձեզ է:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԳՈՐԾ

Ձերբակալվածների մեջ կան անմեղ մարդիկ, կարծում է Պարույր Հայրիկյանը

ՏԵՎՄՆ, 18 ՄԱՐՏ, ՄԱՐԻ- 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ահաբեկչության գործի առնչությամբ ձերբակալվածների մեջ կան բացարձակ անմեղ մարդիկ: Այդ մասին հայտարարեց ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ Պարույր Հայրիկյանը:

Նրա ասելով, վերջին օրերին հանձնաժողովի անդամները երկու անգամ եղել են ինչական մեկուսարանում, որտեղ դահիվում են ձերբակալվածները, եւ այցելել են Նաիրի Հունանյանին, Ալեքսան Հարությունյանին, Հարություն Հարությունյանին եւ Մուշեղ Մովսիսյանին:

Հայրիկյանի ասելով, այցելությունների գլխավոր նոյտասկն էր դարգել, թե արդյոք ձերբակալվածները ենթարկվո՞ւմ են ֆիզիկական ճնշման: Մի կողմից հանձնաժողովի անդամներն ունեին փաստաթաններ Ռուբեն Ռեսունու, Ռուբեն Սահակյանի եւ Կոմվել Գրիգորյանի վկայությունները իրենց դաշտանյալների նկատմամբ ֆիզիկական ներգործության վերաբերյալ, որոնք հաստատվում են իրենց իսկ՝ ձերբակալվածների ցուցմունքներով: Մյուս կողմից՝ այդ փաստերի հերքումը Հայաստանի գինվորական դատախազ Գագիկ Ջհանգիրյանի կողմից, որը դրանք մեկնաբանում է որպես դաշտանության մարտավարություն:

«Չի կարող տարակուսանք չհարուցել այն հանգամանքը, որ իրոք լիովին հաղորդակցում են, մասնավորապես, դահիսոտրոդ դատարասուկների ներգործության ենթարկված Հարություն Հարությունյանի եւ Մուշեղ Մովսիսյանի կողմից իրենց զգացողությունների նկարագրության տեսքերը, նույնիսկ՝ բառերը», նշեց Հայրիկյանը: Այնուամենայնիվ, մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահն ընդգծեց, որ ինչական մեկուսարան այցելելուց հետո իր մոտ ստեղծվել է այն տպավորությունը, թե ձերբակալվածներից ոմանք բյուրիմացաբար են այնտեղ գտնվում: «Ապայժմ ես ձեռնպահ կմնամ որոշակի ազգանուններ նշելուց, քանի որ վաղ է վերջնական եզրահանգումներ անել: Մոտ ապագայում կկայանա հանձնաժողովի նիստ, եւ մեր կազմած եզրակացությունը կհանձնվի նախագահին», ասաց Հայրիկյանը:

Ինչ վերաբերում է Նաիրի Հունանյանին, որի մեղքն ակնհայտորեն կասկածներ չի հարուցում, ապա հանձնաժողովի անդամների շրջանում ստեղծվել է այն տպավորությունը, թե ահաբեկիչների դաշտակցուխն իր ցուցմունքները տալիս է ինչիչների ֆիզիկական ճնշման ներքո:

Հանձնաժողովի նախագահի ասելով, իրեն անհրաժեշտ էր դարգել, թե արդյոք հանրապետության զինվորական դատախազը համոզված է, որ ձերբակալվածները մեղավոր են, եւ որ ինքությունը ճիշտ ուղղությամբ է ընթանում: «Ինձ համար կարեւոր էր, թե արդյոք զինվորական դատախազը համոզված է, որ ինքն իրավացի է: Ջհանգիրյանը մեզ ներկայացրեց ձերբակալվածների մեղավորության, իր կարծիքով, անվիճելի ապացույցներ, սակայն դրանք ինձ 100 տոկոսով չհամոզեցին», ընդգծեց Հայրիկյանը: Նա ընդսմին ավելացրեց, որ շատերու հարկ չկա, եւ ինչական մեկուսարան ձեռնարկած այցելության արդյունքները լիովին շարադրված կլինեն հանձնաժողովի եզրակացության մեջ:

Պարույր Հայրիկյանը նաեւ նշեց, որ հանձնաժողովի եզրակացությունը կներառի նկատողություններ ձերբակալվածներին դահելու դայմանների վերաբերյալ, որոնք առնչվում են, մասնավորապես, նրանց գրքեր տրամադրելու անհասկանալի արգելքին:

Հայաստանի ամերիկյան համալսարան

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 2000-2001 ուսումնական տարվա ընդունելությունը **մագիստրոսի կոչում** շնորհող հետեւյալ ծրագրերով.

- **ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**
- **ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
- **ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ**
- **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
- **ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ**

Բարձրագույն կրթությունը եւ անգլերենի լավ իմացությունը պարտադիր են:

Մարտի 25-ին, ժամը 11⁰⁰-ին, հրավիրում ենք ՀԱՀ-ի մեծ դահլիճ մասնակցելու **բաց դռների օրվան**:

Փաստաթղթերի ընունման վերջին ժամկետն է **ապրիլի 17-ը, ժամը 15⁰⁰-ը**:

Տեղեկություններ համար դիմել՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 19 սենյակ:

ՀԵՌ՝ 27-16-29

Hotel Armenia
Waiter/Waitress

We are looking for a Waiter/Waitress to work at the Hotel Armenia.

Basic knowledge of English and Armenian, ability to communicate with people and have a spirit to serve.

Apply in writing with full CV by March 25, 2000, Hotel Armenia, Amiryan 1, Yerevan, Armenia, Departmment of Human Resources.

Tel: 560391 Fax: 151 803

Հայաստանի ամերիկյան համալսարանի հասուկ դասընթացների բաժին

Դասախոսությունների շարք ծրագիր

«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արամ Աբրահամյանը

ներկայացնում է

«Շորրորդ իշխանությունը Հայաստանում»

Չորեքշաբթի, մարտի 22-ին, ժամը 18:00-ին
Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում
Դասախոսությունը կընթանա հայերենով, անգլերեն համընթաց թարգմանությամբ

Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58

ԱՄՀ 1965 թ. գործող Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ է, հրավիրում է մասնակցելու Եվրոդայի երկրներում, ԱՄՆ-ում, Հայաստանում միջազգային աշխատանքի ճամբարների ամառային ծրագրերին որպես կամավորական:

Դիմումները ընդունվում են հետեւյալ հասցեով՝ Կորյունի 19ա, 7-րդ հարկ

Հեռ. 52 27 01, 52 27 72, 52 27 88

BSC Business Support Center

Սայաթ-Նովայի փ. 242, Երեւան 375002, Հայաստան
Հեռ./Ֆաքս՝ 151824, 528279, 528654, 561064, 7812 (ներս.)
bsc@bsc.am
www.bsc.am

BUSINESS SUPPORT CENTER

- Գործարար խորհրդատվություն
- Գործարար դասընթացներ
- Առեւտրի խթանում եւ տեղեկատվություն
- Գործարար օրենսդրության խորհրդատվություն

Hotel Armenia
Cost Controller

We are looking for a Cost Controller to work at the Hotel Armenia.

Excellent knowledge of English and Armenian, an excellent computer skills, basic knowledge of International Accounting Standards (IAS) and Armenian Accounting legislation is a must, excellent communication skills and ability to work with people.

Apply in writing with full CV by March 25, 2000, Hotel Armenia, Amiryan 1, Yerevan, Armenia, Department of Human Resources.

Tel: 560391

AED

Academy for Educational Development

ANNOUNCEMENT

The Academy for Educational Development (AED) is inviting to participate in

MASTERS OF BUSINESS ADMINISTRATION - ACCOUNTING PROGRAM

The long-term goal of the program is to create a cadre of internationally trained and high quality professional accountants and financial managers. The Masters of Accounting program will educate in western/international accounting methods and teach students how to apply these skills and knowledge in Armenia.

Duration/Dates: The program will start in June or August 2000 and will include 15 months of academic study and 3 months of accounting internship

Number of participants: 2

Course Location: The program will be held in USA University offering MBA in Accounting with focus on International Accounting Standards

Persons willing to participate in this program should meet the following requirements:

1. Have strong academic and work experience in accounting, business, finance or economics;
2. Completed academic training in accounting (ACCA Certificate Training and/or other traditional accounting training program);
3. Have Grade Point Average (GPA) for last university degree received in Armenia or elsewhere at least 4.5 out of 5s in the Armenian system;
4. Have work experience in accounting, business, finance or economics and/or teaching experience in accounting at least for 3 years;
5. Financial analytical and conceptual skills as demonstrated in the ability to explain a financial or accounting document or report to be given them during the personal interview;
6. Professional and/or community leadership skills as demonstrated by work with accounting associations, NGOs, clubs, etc.

Each applicant will be ranked according to the criteria and scoring system, developed by AED.

For more information, please contact:
Anahit Yermjakyan at AED/Yerevan at the following address: 54a Aygedzor Lane, Yerevan, Armenia
Phone: 27-17-20; 27-70-08; 27-43-98

You'll be asked to fill Application for Training at AED/Yerevan office.

Deadline for Application is March 27, 2000.

ՀԵՌՈՒՏԱՑՈՒՑԱԿԻՐ

21 մարտ

9.00 Հայլուր
9.20 Սերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.15 Իմ տունը
10.20 Մամուլի կրոյակ
10.30 Բոհեմ
11.05 Գ/Ֆ «Թուքակով կինը»
12.40 Բարի ախորժակ
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Սեզամ. բացվիր
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 Հեռուստալոտո
20.00 Շրջադարձ
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Պրեմիերա
21.55 Գ/Ֆ «Եկվորները»
23.25 Ժողովրդական երգեր
23.40 Հայլուր
00.00 Կենտրոնական ճեղքնթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս
9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.00 Սերիալի դրեմիերա «Ամեն ինչ հանուն քո սիրո» (1-ին մաս)
17.00 Մուլտծրագիր
17.35 Սպորտն անցած շաբաթ
18.00, 20.30 Լուրեր
18.20 Մանկական ժամ. սերիալ «Նինձա կրիաները», սերիալ «Սոլտին»
19.10 Սերիալի դրեմիերա. «Ամեն ինչ հանուն քո սիրո» (2-րդ մաս)
19.35 Համերգ. «ԱԲԲԱ»
21.00 Ռուսական խստաղա
21.30 Գ/Ֆ «Ինտերդոջիկը»
24.00 Լուրեր (ռուսերեն)

9.00 Տոմար
10.30 Ասպարեզ (կրկնություն)
19.05 Շղջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Հմայիլ
20.30 Ասպարեզ
21.10 Հրապարակ
22.05 Գ/Ֆ «Կապիտան Ռեն»
0.35 Ակնարք
0.40 Գ/Ֆ «Իտալական մաֆիա» (ավարտին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
9.20 Ընտրություններ-2000
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ուրվական որսացողները»
16.45 Ամեն ինչ հնարավոր է
17.00 Պատանի գլադիատորները «Լեռան արքան» ծրագրում
17.25 ...Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Ընտրություններ-2000
19.30 ԿՔՀ-մոլորակ
20.00 Փնտրում եմ քեզ
20.45 Սերիալ «Մահաբեր ուժ»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Սերիալ «Դիմակայում»
00.05 Վավ. սերիալ «Տասը տարի. որ...»
00.50 Նորություններ
01.10 Նշանավոր մարդկանց կյանքը. Գեորգի Ժժենով
01.40 Գ/Ֆ «Ճշգրիտ հավասարություն» (դերերում Փ. Մոնթգոմերի, Բ. Քենփբել. Ա. Հոլլ. ԱՄՆ. 1996 թ.)

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20-10.20 Բարի լույս, Ռուսաստան
9.25 Հեռուստատեսային ՀՄՄ. հերթապահ բաժանմունք
9.40 Ընտանեկան նորություններ
10.20 Մուլտֆիլմ «Խլուրդը գազանանոցում»
10.30 Հեռուստահանդես «Արենա-սպորտ»
11.00 Մուլտծրագիր
11.35 Բորիսլավ Բոնդուկովը, Սերգեյ Մախովիկովը «Հիդինիադա. կամ սիրո մայրցամաք» ֆիլմում
13.00 Հեռուստատեսային ՀՄՄ
13.25 Իմ XX դարը
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.25 Հեռուստահանդես «Կանանց քաղաք»
15.05 Կարճամետրաժ կինոնկար «Ուզում եմ ապրել»
15.35 Նոնա Մորդյուկովան եւ Արմեն Ջիգարխանյանը «Ժուռավուլկա» ֆիլմում
17.00 Մուլտծրագիր
17.25 Խանութ բազմոցի վրա
18.20 Աշտարակ
18.45 «Ռոսիա» կինոթատրոն Գ/Ֆ «Ջոկեր»
20.25 «Կլոր սեղան»
21.50 Երաժշտական ռինգ. 25 տարի եթերում
01.10 «Կ-2»-ը ներկայացնում է
02.05 Հեռուստատեսային ՀՄՄ. հերթապահ բաժանմունք
02.20 Խանութ բազմոցի վրա

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1225 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 20. 03. 2000 Գինը՝ 100 դրամ